ԵՐ. ՕՏԵԱՆ ԵՒ ՄԻՔ. ԿԻՒՐՃԵԱՆ

ՓՐԱՆՔՕ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԿԱՄ ՉԱՐՃԸԼԸ ԱՐԹԻՆ ԱՂԱ

(ՊՈԼՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ 3 ԱՐԱՐ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԳՐԱՏԱՆ
Նուրբ Օսմանկիւղ Ճաւսխսի, 52
1956

2077

ԵՐ. ՕՏԵԱՆ ԵՒ ՄԻՔ. ԿԻՒՐՃԵԱՆ

ՖՐԱՆՔՕ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ
ԿԱՄ
ՉԱՐԹԸԼԸ ԱՐԹԻՆ ԱՂԱ

(ՊՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ 3 ԱՐԱՐ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԳՐԱՏԱՆ
Նուրը Օսմանիյէ Ճաւսխսի, 52
1956

Ա Ն Ձ Ե Ր Ը

ԱՐԹԻՆ ԱՂԱ.— Զարշըլը վաճառական

ԵՒՓԻՄԷ.— Արթին աղայի կինը

ՌՕԶ.— » » աղջիկը

ՏՕՔԹ. ՇԱՒԱՐՇ.— Բժիշկ

ԱԳՈՒՊԱՍ ԱՂԱ.— Արթին աղայի բարեկամը

ԳԱՌՆԻԿ ԱՂԱ.— Եւփիմէի եղբայրը

ՏԻՐԱՆ.— Խմբագիր

ԼԵՒՈՆ.— Փաստաբան

ՎԱՀԱՆ.— Դասատու

ՌՕՍՏՈՎ.— Ռուսահայ մը

ՆԻԿՈՂՈՍ ԱՂԱ.—

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՄԸ.—

ՍԻՍԱԿ.— Ծառայ

Ա. ԱՐԱՐՈՒԱԾ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տեսարանը կը ներկայացնէ Արթին աղայի տան հիւրասենեակը, աջ ու ձախ եւ մէջտեղէն դուռներ, մէջտեղի դրան մօվ սեղան մը որուն վրայ ջուրի սրուակ, գաւաթ մը, զանգակ եւ խանի մը հոտի շիշեր կան: Բեմին ձախ կողմը թիկնաթոռ մը եւ աջ կողմը աթոռներ:

ՏԵՍԻԼ Ա.

ԱՐԹԻՆ ԱՂԱ—ԵՒՓԻՄԷ

ԵՒՓ.— Հապար անգամ ըսած եմ քեզի որ մարդու առջեւ ինծի էֆթիկ չըսես, իմ անունս Եւփիմէ է Եւփիմէ՛... քսան տարի կ՛ըլլայ կոր կարգուելնիս, դեռ այս կէտը չկրցանք հասկցնել քեզի... Նորէն քիչ մը առաջ հիւրերու առջեւ էֆթիկ ըսիր. ամօթէս գետնին տակը անցայ:

ԱՐԹ.— Ես ալ քեզի մ՛իլիոն անգամ ըսած եմ քի ինծի մ՛իւսիւ Բասքալ չըսես մարդու առջեւ. իմ անունս Արթին է պէ Արթին... տուն նասը՞լ սա քսան տարուան կիւղէլիմ Արթինը Բասքալ ըրիր հէ՞... Ան չէ ամա հոդիդ սիրես սա Բասքալն ալ ո՞ւրտեղէն հանեցիր. իմ կիտցածս Բասքալ տէյի բայլաջոյին կ՛ըսեն:

ԵՒՓ — Մ՛ըսեր այդպէս վրադ կը խնդան, Բասքալը գաղղիերէնն է Յարութիւնի՛ն, Արթաքի՛ն, Արթինին ալաֆրանկան է:

ԱՐԹ.— Անունին ալաֆրանկան կ՛ըլլա՞յ մի պէ... անունը անուն է վէսէլլամ... սասո՞ւթ է ասիկա չէնէմի թաբիխ... իմ հօրս մօրս տըրած անունը տո՞ւն եղար փոխող պէ կնիկ...

ԵՒՓ.— Ո՛հ, ինչ տգեղ բայտարութիւն, վույ չիտակը կ՛ամչնամ կոր կնիկդ ըլլալուս. քանի անգամ ըսած եմ

որ առանկ պէյով քայով չի խօսխս հետս, մարդու առջեւ ալ կ'ընես կոր վրաս տաք տաք քրտինք կ'իջնայ կոր։

ԱՐԹ.— Էյ սա, պէ կընիկին ալաֆրանկան ի՞նչ է... ըսէ տէ սորվինք։

ԵՒՓ.— Պէ կընիկին ալաֆրանկան՝ տիկին է։

ԱՐԹ.— Աֆ էս ըրեր էֆէնդիկ հանըմ, ես 45 տարեկան մազս մօրուքս ճերմկցած մարդ եմ, առանկ եկեր եմ առանկ պիտի երթամ. էս ալաֆրանկային խաթերը համար նէ զանցաս կրնամ փոխել նէ ալ լեզուս... Հիմա քու ալաֆրանկայիդ թախ օրթաւսդը...

ԵՒՓ. (Աղաղակ մը արձակելով ու ականջներր գոցելով բիկնաբոռին վրայ կ'իյնայ).— Ա՜հ, չիմանամ, չիմանամ։

ԱՐԹ.— կէնէ սընըրները պռնկոց, (պօռալով) վարդուկ, եկուր նայէ տուտուդ ի՞նչ կ'ըլլայ կոր։

ԵՒՓ.— Ա՜հ, ա՜հ, սիրտս... բաներ մը կ'ըլլամ կոր... Ռօզ ըսէ՛, Ռօզ, վարդուկը ի՞նչ է. աղջիկս Պարտիզակցի ապաստո՞ւհի է...

ԱՐԹ.— Հիմակ Ռօզիդ ա՛լ քեզի ալ։

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆՓ — ՌՕԶ

ՌՕԶ (Վազելով կը մտնէ).— Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ դարձեալ... Ի՞նչ կայ, Տէր Աստուած (մօրը ծովը կ'երթայ)։

ԵՒՓ.— Ա՜խ, Ռօզա, այս հայրդ զիս դերեզման պիտի իջեցնէ... Ա՜խ, կը մարիմ կոր, անդանիս վրայէն հոտի սրուակ մը բեր...

ՌՕԶ (Դուրսեն իսկոյն սրուակ մը բերելով հոտուրտալ կու տայ ու յետոյ հօրը).— Հայր, նորէն ի՞նչ եղաւ։

ԱՐԹ.— Ի՞նչ պիտի ըլլայ, պան մըն ալ չեղաւ... պէլքի ալաֆրանկային նամուսին տպանք... կխտէսքի սա կեանքին տակը անցնելիք ալաֆրանկան ամուճային տղան է...

ՌՕԶ (Խնդալով).— Դարձեալ էֆէնդիկի Բասքալի կո՞ւէ...

ԵՒՓ (Ինքզինքը ժողվելով).— Կը նեղեմ իրեն, աղջիկս, կը նեղեմ, որովհետեւ...

ՍՐԹ.— Կը նեղե՞ս մի... եէտիյէ խալըթա պաք, ի՞նչ մեղք կործեցինք քի կը նեղես կոր...

ԵՒՓ.— Կ'աղաչեմ, Բասքալ, ալ քիչ մը մեղքցիր կնիկդ, նորէն մի սկսիր։

ՍՐԹ.— Կէնե՞մի Բասքալ... Հիմա ալ օրհնեալ բերանս պիտի բանամ... Պէ պապամ, քեղի հազար անգամ ըսինք քի իմ անունս Սրթին է, Բասքալ բայլաչոյին կ'ըսեն, մենք հոս բանաւոմինա չենք խալար կոր... Աստուած վկայ ինձի անանկ կուգայ կոր քի սրթամ նորէն մկրտուիմ, անանկ անուն մը առնեմ քի ալաֆրանկա չունենայ, աս ալաֆրանկան լճաա ընողին ա՛լ, Պուլիս մտցնողին ա՛լ... ո՞ւր տեղէն ալ կընաց էկաւ փէհլիվան եախըսըյի պէս մեզի փակաւ... պէ պապամ, ես Եէնի Խաբուցի եմ, դալրատուն կացած մարդ չեմ, դպրոց օլարախ մեր գեղին խումլուխը տեսած եմ. տասը տարեկան էի չարշը եկայ, մահտեսի հաճի Տարտաւիչ աղային քով հինգ տարի աշակերտութիւն ըրի, իմ թէրսլիյէս հոն առած եմ. իմին թէֆթէրներս խասայինն թօփերն էին, ճէտվէլ գրիչս ալ էնտազէն իլէ մախասը... տունէն չարչի՝ չարչիէն տուն... ես անանկ ալաֆրանկային սէմթը ոտք կոխած մարդ չեմ... ինձի մինչեւ կարգուած օրս Սրթին աղա կ'ըսէին, հօրս մօրս լեզուովը կը խօսէի, մէկը պան մը չէր ըսեր, կըռաբառը ժամէն դուրս լսած չունէինք, անանկ ղէվզէք՝ չըթ գըրըլ-ըսմ նոր մօտս հէրիֆներուս հետ ասլա բարեւ ասծուբարին ըրած չունէի... իրիկունը խանութը կոցնելուս պէս չիփ չիտակ տուն կ'երթայի, կալօշ բօթինս կը հանէի, բա-պուճներս ոտքս կ'անցունէի, կէճէլիկս կը հագնէի, սէտիր բին վրայ հան կուգայի, տիւզին հարուրնոց անարատ չիշէն քովիկս... օ՛խ պապամ, կէլ քէֆիմ կէլ... (երկուրց nsfի կ'ելլեն), աղուոր աղուոր կը խմէի, կերակուրս կ'ուտէի, սատթը իրիկ եղա՞ւ մի, ալ Սրթին աղան ճօտղանին տակը փնտուելու էր, առտուն շաֆախին աչքս կը պանայի, սուրբ Աստուած տուն ինձի օգնական ըսելով խաչս կը հանէի, հայտէ նորէն չարշի։ Մենք ատանկ մեծցած, ատանկ ապրած, սէտէտէն անատան պապատան ատանկ տեսած ենք, ալաֆրանկան էրածնուս մէջը պիլէ տեսած չունինք, քեզ առինք հասկցա՛նք, ճանչցա՛նք, բարով խերով չճանչնա-յինք, խախտուելուն մըն է փրթաւ, նայիս ալ Սրթինը

Բասքալ եղաւ, քիւլպաստըն քօթօլէթ եղաւ, էֆթիկը Եւփիմէ եղաւ, չօրպան ապուր եղաւ. խախվէն սուրճ եզաւ, կէճէլիկը՝ բապուճը պարիթ եղաւ, օտուբընիս ալ նառըր եղաւ, տիւզ ռախին՝ քօնեակ չառթուէօզլի փոխուեցաւ, լեզունիս կըռաքարէն պռնուեցաւ, մեր կեանքն ալ հառամ եղաւ... Քանի տարի է դպրոց կալու պէս ամէն իրիկուն տուն կուգանք տահա սա ալաֆրանկայինն տիբլօման չկրցինք առնել... Ամէն օր չան քարո՛զ, դա՛ս, նասիհա՛թ, չախ. չըխըշ... Պան գործ չունինք մարդու մէջ նստի՛լ ելլալ, խօրաթիլ կը սորվինք. կոր, սանքիմ մենք հայվան ենք, մարդ չենք տեսեր, լեռը ապրեր ենք, մարդու առջեւ սանկ նստէ, տանկ մի նստիր, սա պիչիմ պերանդ պաց, սա ձեւով գոյէ, օտքըդ օտքիդ վրայ մի դներ, մատդ քիթդ մի խօթեր, ծանըզդ ծուռնըզդ խմչէ, կրնաս նէ հիչ մի խմչեր տէ խլլինքըդ կլլէ... Թուքնել, հազալ, էսլէմիշ ընել, փռնգտալ եասախ է եղեր... Բօթինը թող մէնկէնէի պէս օտքդ սխմէ, նասըրնեռուդ ցաւէն հոգիդ պերանդ թող կայ, ծան հանելու չես, չարչըրուելու ես եղեր, չիւնքի միսաֆիրներուն քով բօթին հանելը աւէթա ալաֆրանկան խաչը հանել է եղեր... Ջուրը կուռթ կուռթ խմելու չէ եղեր, չաթալը սանկ պռնելու է եղեր, չօրպայինն վրայ փչելու չէ եղեր, գերէ լինչ խըտաը պերանդ շատ խաչինէ անխըտաը քիշկին ալաֆրանկա կ'ըլլաս եղեր... անանի չէ՞ էֆթիկ հանըմ... մեղայ մեղայ, Տիկին Եւփիմէ... Թէզպիհ մը ունէի, ան ալ ալաֆրանկային խուռպան կընաց, ծառքէս առիք, վախթով պապատան գալմա ուշախ մը ունէի, աստուածծավախ, մաղլըմ, խօսմուռուք մարդ... իրաւ քիչ մը ցնդած էր, սօլ ականջը քիչ մը ծանր էր, սաղ աչքը քէօր չէր ամմա չէր տեսնար, մէկ ոտքն ալ քիչ մը կեռինը կը քսուէր, ամա հիչ չէնէ իրարու լեզուէ կը հասկնայինք հա... Մեր մատամանն չհաւնեցաւ, գործին չհկաւ ճամբայ տուաւ... հայվար չիյտէ եղեր... տեղը դպրոցէն նոր ելած տիպլոմալը տըղայ մը պերաւ քի, սպասաւորութիւն ընելու տեղ պատուհուիւթիւն կ'ընէ կոր. տունին մենծ աղան է եղեր, մեր կնիկը պարոն կը կանչէ կոր, հետը կըռաքաւ չխօսիանէ քիպրիթ մը պիլէ չպերեր, ամա ի՞նչ է, թէմիզ հայերէն կիտէ եղեր, ամա թէմիզ ճուր մը բերել չիյտէ... հէլպէթտէ... Ըսածներս սո՞ւտ են... հախ չունի՞մ մի... հայերէ-

նին թէմիզը աղտոտը կ'ըլլա՞յ, հապի՞կ է մի, չէնէ մի թէնճիրէ... Մարդ Աստուծոյ պապանձեր մնացեր էք... Առաջնորը պիւթիւն հինաւուրց բարեկամներս, չարշըի անպապաններս կուգային կ'երթային մեղի, չէնք չընորհք կը նստէինք, կը խօրաթուէինք, սկամպիլ կը խաղայինք, կօնչինայ կը խաղայինք, քիթինէ կը խաղայինք, օթուզպիր կը խաղայինք, վախիթ էր կ'անցնէր, սա մեր Եւփիմէ օլաճախը անանկ հիյէթ մը ըրաւ, անանկ թէրթիպ մը պըռնեց, անխըտար կըուաքառ խօսեցաւ, անխըտար «թիկնաթոռին վրայ բազմեցէք, որպիսութիւննիդ ինչպէս է, ներողութիւննիդ կը խնդրեմ, բայց մայց՝ դուք մուք՝ սակայն որովհետեւ՝ քանզի՝ սիրելի պարոն, տիկին» ըսաւ քի զավալլընները եաղըլմիշ եղած ևմք պաշխատուռ չալեցինք ըսելով օտքընին կտրեցին մեր տունէն... Հիմակ նայիս նատիտէ հէրիֆներ, էն էխթիյարը էռսունը անցուկ չէ, դպրոցէն նոր ելած թախըմ մը զիւպպէններ, քալիքաթուրա խըյաֆէթլի սիւրիւ մը հաբիթաններ, որը մէհէնտիս է եղեր, որը տոքթոր է եղեր, որը դազէթաճի է եղեր, որը ավօքաթ է եղեր, որը միրաս եէտի է եղեր։ Ամէնքը քով քովի պէրէստէ սըխմեսնէ մէջէն չարշըլը մը չելլար... հավուզ պիչխմի շաբխաններ, խուռնիի պէս բօթիններ օտուրընին, խազըխի պէս եախաններ, գալք կիտէլիմ պըյըլներ, մօրուքնին ըսես՝ չաթալը կայ, քէփճէն կայ, էլփազէն կայ, չալը սիւփիւրկէսին կայ, բանթոլոնընին ըսես՝ եախըյի պէս մխերնուն փակած, վրանին աճալ աճայխլ հոտեր, մարդուն քիթին գուռը կ'իյնայ. կընիկվարտ մարդեր, զայիֆ ղիւյիւֆ, ծառվընին սըխմելու ըլլաս նէ կը վախնաս քի չըթ տէյի բըրթին պիտի, ամմա ինչ է՛ ուսումնական են եղեր, գօլէճ կացած են եղեր, տիբլօմաուներ եղեր, ֆրանկսըճա կիտեն եղեր, կը կարդան կը գրեն եղեր... զար... զար... զարմացեալ են եղեր... Մեղայ մեղայ, զարգացեալ... անանկ չէ՞... Նայէ ճուղապ կուտա՞ք, պապանձումն Զաքարիայի էք եղեր, չը խօսի՞ք նայինք... վայ չունչանորգիներ վայ... մենք ալ էշու պէս չան քարող կը կարդանք կոր երկու սաաթ է, մեղք նէֆէսիս պէ, ճօշմիշ ալ եղեր էի, էբէյի ալ աղէկ խօսեցայ, մեղք։

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐԹԻՆ — ԵՒՓԻՄԷ

ԵՒՓ.— Բանախօսութիւննիդ լմնցա՞ւ... կրնանք մտնել։

ԱՐԹ.— Նասը՞լ գործիդ չհկած պաները մարիկ չես ըներ հէ. հոս ըլլայիր տէ մարիկ ընէիր, նասըլ ալաֆրանկայիդ խերը անիծեցի...

ԵՒՓ.— Դուն ո՛վ, ալաֆրանկան պերանը առնողը ով...

ԱՐԹ.— Պերանս չէ օտքիս տակը պիլէ կ՛առնեմ։

ԵՒՓ.— Աման չարշըլը դուն ալ, արդէն խեղթը հս եմ որ պարապ տեղը չուռնչ կը հատցնեմ, մեղք որ լինծի պէս զարգացած կիներ մը ունիս և տատանկ անճռունի գաղաթարներու կը ծառայես։

ԱՐԹ.— Ծառա՞յ եմ մի... էյ թամամ բայլաչօ էինք չէր օգտեր կոր, հիմա ալ ուշախ եղանք... չնորհակալ եմ...

ԵՒՓ.— Չհասկցար, կեցիր բացատրեմ... բանի մը, գաղափարի մը ծառայել հայերէն կը նշանակէ... սա ինչպէս ըսեմ... օրինակի համար։

ԱՐԹ.— Չըսես նէ ալ կ՛ըլլայ, դաս տալու մ՛եկլար կէնէ...

ԵՒՓ,— Այսինքն երբոր սա... հիմա նայէ՛... ենթադրենք թէ ըսել կ՛ուզես որ... աման ես ալ ինչ եմ եղեր, խելքս գլուխս չէ, բոլոր գիտցածս փախաւ... կեցիր պարոն Սիսակը կանչեմ բացատրէ քեզի, (գանգակը կը հնչեցնէ)։

ԱՐԹ.— Ոտքըդ պագնեմ, ինչ կ՛ընես կոր, վազ անցանք։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ — ՍԻՍԱԿ

ՍԻՍ (խոնարհութեամբ).— Ի՞նչ կը հրամայեն իմ տէրս և տիկինս։

ՍՐԹ.— Ի՞նչ խալթ կ՛ուտէ կոր պէ։։ գարըյատա օրթաք չըգտը... կըռաբառնին խաթերը համար ա՞ս ալ կլլելու է...

ԵՒՓ.— Պ. Սիսակ, մխսիւ Բառքալին բացատրեցէք թէ ծառայել ի՞նչ կը նշանակէ։

ՍԻՍ.— Ծառայել, ներդործական կանոնաւոր բայ, առաջին լծորդութիւն, սահմանական ներկայ... կը ծառայեմ (եւայլն), անկատար կը ծառայէի (եւայլն)։

ԱՐԹ.— Սուս եղիր պէ, հասկցանք. ամէնքս ալ ծառայ ենք. ես ալ ծառայ եմ, դուն ալ ծառայ ես, ան ալ ծառայ է. հիմա նայէ քի օրթան գործ տեսնող չկայ. ո՞ւր է քու ծառայելդ, նայէ՛ կեսինը խառըշ մը թօզ կայ, աստղք թէմիզցու քի ծառայելդ հասկնամ. աֆ կ՛ըննես, աս դատն ալ ես քեզի տուած կ՛ըլլամ... Հիմակ ձգենք սա պօշ լախըռաբնները, ցորեկին ի՞նչ պիտի ուտենք ըսէ նայինք։

ՍԻՍ.— Այս ցերեկ պիտի ուտէք տապկած վահանաձուկ, հորթի միսով արգանակ, կանկառի կոխածոյ և տանձանուշ։ (Դուրս կ՛ելլէ)։

ՍՐԹ. (Բերանը սրբելու պես ընելով).— Ես փառք յաւիտեան յաւիտենից ամէն... Ծօ մենք ասկըտար կըռաբառ կերակուր ուտելու ըլլանք նէ վարդապետ կ՛ըլլանք ծօ, վարդապետ... Սըվոնց հայելարը քիչ մը հիմարէթ ընէիր։ Աստուածդ սիրես, սըկէ պան մը հասկցար նէ լինծի ալ ըսէ։

ԵԻՓ.— Աստուած իմ, ի՛նչ գլուխ, կարդուելէս ի վեր հայերէն կը խօսիմ, դեռ բան մը չսորվեցայ... Ինծի նայէ Աբթին աղա...

ԱՐԹ.— Փառք քեզ Տէր, հէլէ ով ըլլալս հասկցայ։

ԵԻՓ.— Իրա՞ւ բան մը չհասկցար Սիսակին ըսածնեբէն... վահանաձուկը չիյտո՞ս ինչ է...

ԱՐԹ.— վահանը աղբօրս տղան է, պոչի ձուկը ի՞նչ է...

ԵԻՓ.— Սա դուք ուր է խալխան կ՛ըսէք նէ...

ԱՐԹ.— Սա մէկ... Սա հոնէն օրթի միսով Արմենակ էր ի՞նչ էր...

ԵԻՓ.— Օրթ չէ՛, հորթ է, արմենակ չէ, արգանակ է...

ԱՐԹ.— Էյ հիմա հասկցայ իշլթէ...

ԵԻՓ.— Այսինքն տանձայի միսով... ո՛հ ինչ կուշտ բաս... խաշլամա։

ԱՐԹ.— Հա չէօյլէ...

ԵԻՓ.— Էյ կանկառի կոխածոն ալ չհասկցա՛ր։

ՍՐԹ.— Է՛ անիկա քիչ մը չախմիշ ըրի, կա՛նկ, իշթէ կըլոխին չո՞ն ըսեր, խուզիլ կըլոխ ըլլալու է· ամա կոխածոն չաշըրթմիշ կ՛ընէ կոր։

ԵԻՓ. (Նցղալով).— Էննկինաուի պաստը է։

ԱՐԹ.— Հէյ կիսի զավալլը էննկինար պաստըսի հէյ, աստ ի՛նչ խըյաֆէթի խօթեր են քեզի· էյ սա ծարինը ի՛նչ էր···

ԵԻՓ.— Արմուտի քօմբօսթօ···

ԱՐԹ.— Հա՛, տեսա՞ր մի եա, խալխանի թալա՛, էննկինաու պաստըսի՛, խաշլամա՛, արմուտի քօմբօսթօ՛, իշթէ ասոնք իշթահ պացող պաներ են, չըլլար պէ չըլլար, ատանկ վահանի ծուկ, Արմենակ Հայկանուշ ֆիլան ֆալան տէյի պաներ մը ուտիմ նէ սինմիշ չըլլար, պօղազս կը կենայ կոր վէսսէլամ։

ԵԻՓ.— Ասոնք պարապ խօսքեր են, քիչ մ՛ալ լուրջ քաներու վրայ խօսինք, գիտես այսօր հիւր մը պիտի ունենանք։

ԱՐԹ.— Կէնէ ո՞վ է։

ԵԻՓ.— Սուս եղիր, խըյախ մէկը, Բարիզէն նոր եկեր է, տօքթօուրութեան տիպլօմա ունի, շատ ուսումնական է եղեր, կ՛ըսեն որ մեծ ապագայ ունի, խըյախ բառթի է, իրարու ձեռքէ կը քաշեն կոր։

ԱՐԹ.— Վա՛խ վա՛խ, բարչա բարչա կ՛ընենն կոր չըսես։

ԵԻՓ.— Ես մտածեցի որ դուն սուտ հիւանդ ըլլաս, մարդը կանչել տամ որ մէյմը մենք ալ տեսնանք՝ ան ալ մեզի տեսնայ, նայինք ի՞նչ կ՛ըլլայ։

ՍՐԹ.— Սուտ հիւա՞նդ մի··· կերած ապուրը նայէ, վրաս ուղուրսուզութիւն պիտի պերես, ես իրաւցնէ հիւանդ չեմ եղած էօմրիւս մէջը։

ԵԻՓ.— Ի՞նչ ընաս ունի, դեղ չպիտի առնես ա···

ԱՐԹ.— Էյ վիզիթա՛ն··· հէքիմը վիզիթա չի՞ պիտի առնէ, (մեկուսի) ծօ՛, աղէկ միտքս եկաւ, խալտ մէճիտիյէ մը ունիմ ան կը քշեմ··· խալտ հիւանդ նայող տօքթօրին խալտ մէճիտիյէ կը վայլէ, (Եւփիմէին) բէք աղէկ ես սուտ հիւանդ կ՛ըլլամ, տօքթօրն ալ խապուռ կ՛ընեմ ամա, դուն ալ իմին Ազբիպաս աղաս խապուռ պիտի ընես։

ԵՒՓ.— Ագրիպա՛ս... այդ ո՞վ է... այդ ի՞նչ պաղ անուն է:

ԱՐԹ.— Հոգ մի ըներ, էլպէթոէ աւոր ալ ալաֆրանվան կը կտնանք ատ քիչ մը կը տաքնայ, բէք չըլլայ նէ Քըթիբխոս կ'ընենք... Աս մարդը 4–5000 ոսկիի ատր է, գործը հալը վախթը, քռէատիթօն տնղը, բնացայինն վրայ խըչախ պռնուած է. պատուաւոր, աստուածավախ, տուննի վրը, հար մար պատուող մարդ մըն է. ես ասիկա Վարդուկիս շատ լայըխ տնսած եմ, աւօր տավէթ ըրի պիտի կայ...

ԵՒՓ.— Ես անանկ Ագրիպաս անունով, չուկացի, անկիրթ, անուս, տգէտ, ճաշակ, քաղաքավարուքիւն, բարեկրթուքիւն, վայելչուքիւն, նրբուքիւն, փափկուքիւն, կենցաղագիտուքիւն չունեցող մարդու աղչկանս բէշը անդամ չեմ ցուցներ:

ԱՐԹ.— Ես ալ անանկ Բարիզէն նոր եկած, ծառքը տիպլօմա, ճէպի տէլիք, չըթ գըռըլտըմ, զէվզէկ, զիւպպէ, հաբիթա, բարա չունեցող, գործ չունեցող, քռէատիթօ չունեցող առաւ վախաւ, հիլլէճի, խուռաճի, օգկապազ մարդու աղչկանս քիթը պիլէ չեմ ցուցներ: (Բարկութեամբ դուրս կ'ելլէ):

ԵՒՓ.— Ես ան կ'ուրթամ կը համոզեմ եաս, եթէ ան աուտ հիւանդ չըլլայ տօքթօրը չընդունի նէ՝ ես ալ Ագրիպաս աղան առօք փառօք դուռնէն դուրս վռնտել կուտամ Սիսակին. (ժամը 4 կը զարնէ) հիմա տօքթօրը ուր է նէ կուգայ, ուրթամ Բասքալը համոզեմ, ես ալ քիչ մը զարդարուիմ. (դուրս կ'ելլէ):

ՏԵՍԻԼ Ե.

ՍԻՍԱԿ — ԱԳՐԻՊԱՍ

ՍԻՍ.— Հրամմեցէք, Տիար, մտէք... խնդրեմ, թիկնաթոռը պատուհցէք:

ԱԳՐ.— Շնորհակալ եմ, զահմէթ մ'առնէք, նստեցէք...

ՍԻՍ.— Հոգ չէ, ոտքի վրայ աւելի հանգիստ կ'ըլլամ, արդէն զբաղած եմ:

ԱԳՐ.— Հրամանքնիդ գիտէք... Էյ ինչպէ՞ս էք... աֆ կ'ընէք էֆէնտիս, ձեզ չեմ ճանչնար կոր, ի՞նչ կ'ըսուիք:

ՍԻՍ.— Սիսակ Կուրեան։

ԱԳՐ.— Էվէլօք գոհ եմ հրամանքդ ճանչնալուս։

ՍԻՍ.— Ներեցէք, Տիար, ստիպողական գործ մը կիս դուրս կը կանչէ, թոյլ տուէք որ պահ մը զձեզ առանձին թողում. (կ'երթայ)։

ԱԳՐ. (Առանձին).— Ա՛ս ի՞նչ քիպար սէլիխանլը, ինչ ալ նազիքութիւն, ազնուական կ'երեւայ կոր, ո՞վ է ամապա։

ՏԵՍԻԼ Զ.

ԱԳՐԻՊԱՍ—ՍԻՍԱԿ—ՇԱԻՄՐՇ

ՍԻՍ.— Հրամմեցէք Տիար, խնդրեմ ներս մտէք...

ՇԱԻ.— Շնորհակալ եմ (Ագրիպաս nsfի կ'ելլէ), կ'աղաչեմ անհանգիստ մի ըլլաք, նստեցէք, մի յոգնեցուներ քինքզինքնիդ, կ'աղաչեմ։

ՍԻՍ.— Ներեցէք Տիարք (Դուրս կ'ելլէ)։

ԱԳՐ.— Ի՞նչպէս էք, էֆէնտիս։

ՇԱԻ.— Շնորհակալ եմ... Մեր աղէկութիւնը կարեւորութիւն չունի, բաւ է որ մեր յաճախորդները լաւ ըլլան։

ԱԳՐ.— Հը՛... անանկ է...

ՇԱԻ.— Դժբաղդաբար այժմ համաճարակներու շրջանին մէջ կը գտնուինք. թիֆօ, վէռօլ, ինֆլուէնցա, սքարլաթին որով գլուխ քերելու ժամանակ չունիմ. կը հաւատաք դեռ ճաշած չեմ. առաւօն սօն էքսէլանս Թորոս պէյէն լուր եկաւ, գացի, դեռ հոն էի եաուէս մարդ ղրկած էին, ազնուաշուք Կիրակոսեան էֆէնտիին կինը անհանգիստ է եղեր. հոն գացի, հազիւ թէ դուրս կ'ելլէի, ֆառմասիէն լուր բերին որ ֆրանսական ամպասատէն գիս ուզած են. անմիջապէս դեսպանատուն գացի, անպասատէօռին պզտիկ տղան սքարլաթինէ բռնուեր է եղեր, պէտք եղածը ըրի. դեղարան կ'երթայի երբ դէմս եկաւ պալատական Սայիտ փաշայի թիկնապահը երկձի կառքով մը, գիս կը փնտռէ եղեր, անմիջապէս կառքը նստայ ու Պէշիկթաշ փաշային խօնախը գացի, մայրը մահամերձ վիճակի մէջ է եղեր, ուրիշ բժիշկներ յուսահատած ու ձեռք

քաշեր են հիւանդէն. ես անմիջապէս էլէքթռօ թէռապիք նոր մէթոտով դարմանում մը ըրի, փորին մէջ երիք հատ քար կար. հանեցի, կինդանացաւ կինը, բոլորովին օռ–ոը տանժէ է, 20 տարի կեանք ասիւռէ կ'ընեմ իրեն. անկէ ալ շիտակ տուն գայի 30—40 հիւանդ կ'ապաւէին, այս որ տեսայ սարսափեցայ և տէխպուեցայ փախչիլ, եաեւի կողմէն պատռհանէն վար ցատկելով և շիտակ հոս եկայ, որովհետեւ խօսք տուած էի. լինչ և իցէ ասոնք ոևէ ռաբօռ չունին այցկլուխեանս բուն շարժառիթին հետ... ձեզմով ղբաղինք (մօտենալով), է՛, ի՞նչպէս էք... ի՞նչ կը ղգաք կոր տեսնենք:

Ա.Գ.Ր.— Էկածէդ պէրի կըլլաս ցաւ մը կ'ղգամ կոր:

ՇԱ.Ի.— Հը՛... դէշ նշան է... Բնութիւննիդ ի՞նչպէս է..:

Ա.Գ.Ր.— Մեծ համբերութիւն ունիմ:

ՇԱ.Ի.— կը նայիք, չհասկցաք... Դուրս կ'երթա՞ք և քանի՞ անգամ:

Ա.Գ.Ր.— Կ'երթամ առաւոտները, պազի ալ կիրակի օրերը (մեկուսի) փախցո՞ւց, ի՞նչ ըրաւ...

ՇԱ.Ի.— Ըսել է օրը անգամ մը:

Ա.Գ.Ր.— Ի հա ճանըմ:

ՇԱ.Ի.— Ի ի՞նչ տեսակ կ'երթաք, պի՞նդ թէ կակուղ:

Ա.Գ.Ր.— Հէ ի՞նչ ըսիր:

ՇԱ.Ի.— Այսինքն պի՞նդ թէ կակուղ դուրս կ'էլլաք...

Ա.Գ.Ր.— Պէ ախպար դուրս եալլալուն պինդը կակուղը կա՞յ մի... Դուռը պացածիս պէս դուրս կելլամ:

ՇԱ.Ի.— Չի հասկցաք, թիւրիմացութիւն մը կայ... Ես ձեզի տունէն դուրս եալլալու խօսքը չեմ ըներ կոր, լինչ և իցէ ձգենք սա խնդիրը, արդէն շատ կարեւոր բան մը չէ... Լեզուն՞դ ինչպէս է, մաքո՞ւր է:

Ա.Գ.Ր.— Մինչեւ հիմա թէփթէմիզ էր ամա, քիչ մը տահա խաֆա ուռևցուննա նէ աղտոտի պիտի ալլահալէմ:

ՇԱ.Ի (Մեկուսի).— Կ'երեւայ թէ նէուլէօ հիւանդի մը հետ գործ ունիմ, (բաղցրութեամբ) նայեցէք ես ձեզ էնթերվիւ ընելու համար չըսի այդ խօսքը... մի յուզուիք, կ'աղաչեմ, յուզումը վնաս է հիւանդին:

ԱԳՐ.— Հիւանդը ո՞վ է պէ։

ՇԱՒ.— Դուք...

ԱԳՐ.— Ե՞ս... վրաս բարի...

ՇԱՒ.— Բայց ներեցէք, Արթին աղան դուք չէ՞ք որուն համար կանչուեցայ։

ԱԳՐ.— Ֆաւ լիցի, ինծի Ադրիպաս կ'ըսեն... Արթին աղան իմ բարեկամս է։

ՇԱՒ.— Ուրեմն մալ անդանաիւ մը եղած է։

ԱԳՐ.— Հսկել է դուք տօքթո՞ր էք...

ՇԱՒ.— Այո՛..է պատիւ ունիմ ինքզինքս ձեզ ներկայացնելու... Տօքթ. Շաւարշ, որ լա ֆաքիւլթէ որ մէտրսին որ Բարի, էքս էնթէրն որ լօքթիթալ որ լա շաուիթէ, ձերդ մեծապատուութեան ծառայելու պատրաստ։

ԱԳՐ.— Շնորհակալ եմ, բայց ես հիւանդ չեմ...

ՇԱՒ.— Ահաւասիկ հոտ է արդէն շատ մը մարդոց դրած աննկերելի սխալը... Սիրելի պարոն, գիտէք որ սկըզբունքով առողջ մարդ չկայ աշխարհիս վրայ... Ով որ առողջ է, հիւանդ եղած է առնօք, և եթէ եղած չէ՝ պիտի ըլլայ ապագային, և նոյն իսկ այդ առողջ վիճակին մէջ չի կրնար առողջ համարուիլ, քանի որ ենթակայ է հիւանդանալու. արդէն ինքզինքը առողջ կարծելը տեսակ մը հիւանդութիւն է որ մասնաւոր դարմանումի կը կարօտի. հիւանդութի՛ւն որ շատ ծանր հետեւանքներ կրնայ ունենալ, որովհետեւ մարդ ինքզինքը առողջ կարծելով պէտք եղած խոհեմութիւնը չի ցոյց ներ ձեռք չառներ և այդպէսով ինքիր ձեռքով կը փորէ գերեզմանը... Այո՛, առողջ մարդ չի կայ աշխարհիս մէջ. հիմա տեսէք, օրինակի համար, դուք որ կը կարծէք թէ որ և է տկարութիւն չունիք այս՞ վայրկեանիս, սակայն պզտիկ ամենաթեթեւ տենդ մը ունիք...

ԱԳՐ.— Տենդը ի՞նչ է...

ՇԱՒ.— Տաքութի՛ւն... ֆիէվռը։

ԱԳՐ.— Ի՛նչ տաքութիւն, Աստուած սիրես նէ...

ՇԱՒ.— Շատ թեթեւ բան մ'է, շատ թեթեւ... Դուք չէք զգար, բայց բժիշկին աչքէն չի վրիպիր, այո՛, վնասակար բան մը չէ, բայց ո՞վ կ'ապահովէ որ ժամէ մը վերջը

չպիտի սասականայ, երեք չորս ժամէն գլեզ անկողին չպիտի ձգէ, թէ վաղը առաւ թիֆօ չպիտի ըլլաք և քանի մը շաբաթէն կառաղութեան և զառանցանքի մէջ չպիտի վախճանիք։

ԱԳՐ. (Դողալով ձեռքը ու գլուխը կը շփէ).— *Աման, կիտէս քի իրաւցնէ տաքութեան պէս պան մը կայ վրաս... Աման տօքթօր, ինծի աղէկ մը մուայէնէ ընէիր...* (Քննութիւն, բալթօն կը հանէ)։

ՏԱՍՆԼԷ.

ՆՈՅՆՔ—ԱՐԹԻՆ ԱՂԱ—ԵՒՓԻՄԷ—ՌՕԶ—ՍԻՍԱԿ

(Եւփիմէ եւ Սիսակ Արքին աղային թեւերէն մտած են)

ՇԱՒ.— *Օ՛, ներկայէք, Տեարք, Տիկնայք...*

ԱԳՐ. (Շուարած կ'սկսի հագուիլ, կոճկուիլ, Սիսակ վազելով կ'ուզէ որ բալթօն բռնէ).— *Ի՞նչ կ'ընես, էֆէնտիս, հիչ կը վայլէ՞ մի... չըլլար նէ։*

ՍԻՍ.— *Խնդրեմ, թոյլ տուէք, մեր պարտքն է։*

ԱՐԹ.— *Բարեւ, Ագրիպաս աղա, անցած ըլլայ, ի՞նչ է ան, տո՞ւն ալ իմ տառօսիս եկար։*

ԱԳԱ.— *Ի՞նչ կիտնամ ախպար, չէնք չնորհք նստեր էլ, միւսին եկաւ, թախըմ մը լախըրտըներ ըսաւ, սաղ մարդ չիկայ ըսաւ, դուն տաքութիւն ունիս, թիֆօ պիտի ըլլաս ըսաւ, ֆէսֆէսէն խա՞տաւաւ, ինքզինքս նայիլ կուտայի կոր դուք վրայ հասաք... Հէմէն հէմէն կիտես քի ալ բէք պօշ խօսք չէ տօքթօրին ըսածը։*

ԱՐԹ.— *Իմ կլուխս ալ եկաւ ատանկ բան մը. էրէկ թուրքի պէս սաղ էինք, ասոր հիւրասցանք...*

ՇԱՒ. (Շնորհալի ձեւով մը տիկինին).— *Արդեօք Տիկին կերպասեանի՞ հետ պատիւ ունիմ խօսիլու... և օրիորդն ալ իր դո՞ւստրն է։*

ԵՒՓ.— *Այո՛, տօքթէօռ։*

ՇԱՒ. (Ինքզինքը ներկայացնելով).— *Տօքթէօռ Շա՛ւարշ, որ լա ֆաքիւլթէ որ մէտըսին որ Բաւիւ, էքս էնթէռն որ լօբիթալ որ լա չաւիթէ, ձեր խոնարհ ծառան... ներկայէք*

տիկին, կարծեմ քանի մը վայրկեան ուշ մնացի, բայց կամքէս անկախ պատճառներով. դժբախտաբար հիմա համաձարակներու շրջանին մէջ ենք։ Թիֆո՛, աքաուլաթի՛ն, բըթիթ վէռօլ, էֆլօէնցա՛, որով դլուխ քերելու ժամանակ չունիմ. կը հաւատա՞ք դեռ ճաշած չեմ. առաուն՝ սօն էքսէլանս Թորոս պէյէն լուր եկաւ, գացի, դեռ հոն էի, հոնէէս մարդ ղրկած էին, աղնուաշուք Կիրակոսեան էֆ.ին կինը անհանգիստ է եղեր, հոն գացի, հարկ թէ դուրս կ'ելլէի. ֆարմասիէն լուր քերին որ ֆրանսական ամպասատէն թէլէֆոնէ ըրեր են որ անմիջապէս դեսպանատուն երթամ, գացի, ամպասատէօրին պզտիկ տղան աքարլաթինէ բռնուեր է եղեր, պէտք եղածը ըրի. դեղատան կ'երթայի երբ դէմս ելաւ պալատական Սայիտ փաշային թիկնապահը երկձի կառքով, պիս կը փնտռէ կոր եղեր. անմիջապէս կառք նստայ՝ Պէշիկթաշ փաշային խօնախը գացի. մայրը մահամերձ վիճակի մէջ է եղեր, ուրիշ բժիշկներ յուսահատած ձեռք քաշեր են հիւանդէն. ես անմիջապէս էլէքթրօմանեէթիք նոր մեթոտով դարմանում մը ըրի, փորին մէջէն երեք հատ քարի կտոր հանեցի, կենդանացաւ կինը, բոլորովին օր տը տանիժէ. քանի տարի կեանք ասիւռէ կ'ընեմ իրեն. հոնկէ ելայ շիտակ տուն գացի, 30—40 հիւանդ կ'սպասէին կոր, այս որ տեսայ սարսափեցայ և ստիպուեցայ փախչիլ եսեւի կողմի պատուհանէն վար ցակելով և շիտակ հոս եկայ որովհետեւ խօսք տուեր էի, ինչ և իցէ ասոնք ո և է ուաքօռ չունէին այցելութեանս բուն շարժառիթին հետ... Մեր հիւանդովը գըաղինք եթէ կ'ուզէք...

ԱՐԹ. (Ագրիպասին).— Սխալար սահաթ մըն է ի՞նչ կը պատմէ կոր սա կէվէզէն։

ԱԳՐ.— Մենք ասիկա պիւթիւն մաիկ ըրինք տէ՝ սօնը սօնը թիֆօս օրթան ելաւ. մուխլախա քու կլօխդ ալ զօռլու պան մը բաթլամիշ պիտի ըլլայ։

ԱՐԹ.— վարդո՛ւկ, քովս եկուր նայիմ, քեզի ճանչցուննեմ։ (Ոօզ կը մօտենայ)։

ԱԳՐ.— Մատմազէլ, ձեր հրամանքին գովեստը շատ տեղերէ լսած եմ, այսօր ձեզ տեսնելու նայիլ ըլլալուս էվէլօք գոհ մնացի։

ՌՕԶ.— Ան ձեր աղնուութիւնն է։

ԵՒՓ.— Ո՛չ, քովս չիգա՞ս, տօքթէօրին հետ տեսնուիս։

ԱԳՐ.— Ռօզը ի՞նչ է...

ԱՐԹ.— Հիչ ճանըմ, Ռօզ Վարդուկին ալաֆրանկան է, չիյտո՞ս կոր պէ... Ֆրանսըզճա Ռօզ կ'ըսեն Վարդուկին, իմ անուշս ալ Բասքալ է հոս գիտցած ըլլաս։

ԱԳՐ.— Սա ի՛նչ թօհաֆ պան է պէ...

ԱՐԹ.— Տահա շատ թօհաֆ պաներ պիտի տեսնաս դուն. քիչ մըն ալ կենաս նէ քու Ադրիպաս անուդ ալ աճալ աճայիպ հիյէթ մը կ'առնէ քի, դուն ալ չես ճանչնար։

ՇԱՒ. (Ժամացոյցը ցայելով).— Ներեցէք, հիւանդներս կ'սպասեն. կը ցաւիմ որ շատ չպիտի կրնամ վայելել ձեր քաղցր տեսութիւնը... տիկին... արդեօք կրնա՞մ հիւանդը քննել։

ԵՒՓ.— Հապա՛ հապա՛...

ՇԱՒ. (Արթից աղայի մօտենալով).— Լեզուն իդ կը հանէ՞ք...

ԱՐԹ.— Լեզո՞ւս մի... (ինքնիրեն) Հա՛ լրաւ հիւանդ եմ, մուգներ էլ (Լեզուն կը հանէ, Շաւարշ կը ֆռնէ)։

ՇԱՒ.— Դիշերը լաւ կը քնանա՞ք...

ԱՐԹ.— Կնիկս շատ տըռտըռ չընէնէ՝ կը քնանամ։

ՇԱՒ.— Ախորժակնիդ ի՞նչպէս է։

ԱՐԹ.— Կըռաքար կերակուր չըլլայնէ մեր աւագհրեցին չափ կ'ուտեմ։

ԵՒՓ. (Յանդիմանաբար).— Բասքա՛լ...

ՇԱՒ.— Էյ սանկ տուն տուն մէչքերնիդ ասղ խօթելու պէս բարակ ցաւ մը կ'զգա՞ք... փոքրիկ բիքիւռ մը... (կը ֆռնէ) հա՛ հասկցայ... տեսէք ես ուրիշ բժիշկներու չեմ նմանիր, իմ մէթոտս է նախ հիւանդութիւնը ճանչնալ, յետոյ զայն ճանչցնել հիւանդին, որպէս զի դիտնայ իւր սեփականութիւնը և ըստ այնմ վարուի հետը... ներողամիտ կերպով՝ եթէ հիւանդութիւնը թեթեւ է, խիստ կերպով՝ եթէ ծանր է... ուրեմն իմ մէթոտիս հաւատարիմ, հրապարակաւ կը յայտարարեմ որ պարոնին հիւանդութիւնը աբանոխխոտ է։

ԱՐԹ.— Աբանոխս մի՛... աւտր ալաֆուրքա անունը չի կա՞յ տօքթօր։

ՇԱՒ.— Ոչ սիրելի տիար, աբանոխխոտը ալաֆրանկա հիւանդութիւն մըն է։

ԱԳՐ.— Ծա՞նր հիւանդութիւն է...

ՇԱՒ. (Լուրջ).— Այո՛...

ԵՒՓ. (Ուրախութեամբ).— Ալֆրանկա հիւանդութիւն մը... ի՛նչ բախտ, ի՛նչ փառք, տէր Աստուած...

ՇԱՒ.— Այո՛, զուտ ալֆրանկա հիւանդութիւն մը, նորելուկ, ֆէն տը սիէքլ, հիք, ազնուապետական հիւանդութիւն մը, որ քիչերու վիճակուած է. ընդհանրապէս նշանաւոր անձերու, բարձր ազնուականներու, արքայական գերդաստանի անդամոց կը հանդիպի այս հիւանդութիւնը, ու հանդիպածը կ'առնէ կը տանի մեծ մասամբ... կը շնորհաւորեմ ձեր հիւանդութիւնը միւսիւ Բասքալ... Պոլիս գալէս իվեր այնչափ հիւանդ նայած եմ, դեռ առաջին անգամն է որ աբանտիսիթի մը հանդիպիցայ... Շնորհաւորութիւններս տիկին, պարոն և օրիորդ (ոհվեռացնս), անպատճառ ազնուական ծագում մը ունեննալու էք միւսիւ Բասքալ...

ԱՐԹ.— Է հա՛ ազնուական կը սեպուիմ. տէտէս Սամաթիայի խօվուշին բէյիզն էր... քուլաղը քէսիք ռէթիք տէյի նամ տուած էր:

ԵՒՓ. (Աղաղակ մը արձակելով),— Բասքա՛լ... (Ոօզինֆովը կ'երթայ) ա՛հ չիշերս բռնից... հոտին սրուակը բեր, Ռօզ:

ՇԱՒ. (Ֆովը երթալով).— Արդէն ներս մտած վայրկեանէս գուշակած էի, ձեր գոյնին չի հաւնիցայ, դուք ալ բան մը ունիք, այո՛, տիկին:

ԱՐԹ.— Ես ունեննալէս ետքը, ան հայտէ... մուխլախա անորն ալ ազնուական հիւանդութիւն ըլլալու է, ըրա անիկա ալ սէրկլճի քէլ Համբիկին աղջիկն է:

ԵՒՓ. (Աղաղակելով).— Բա՛ս... (կը մարի):

ՍԻՍ. (Վազելով).— Իլիմոն, էթէր, ջուր, տիկինը կը մարի կոր. տիկինը մարեցաւ (պոռալ մը վրայ կ'իյնայ):

ՇԱՒ.— Դող մի՛ լլար, ես հոս եմ:

Բ. ԱՐԱՐՈՒԱԾ

ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Բաւական մեծկակ սալօճ մը, աջ կողմը պզտիկ բեմ մը, բառավան մը կայ, աթոռներ. բիլճաթոռ, եւայլն:

ՏԵՍԻԼ Ա.

ԵՒՓԻՄԷ — ՌՕԶ

ԵՒՓ.— Ինծի նայէ աղջիկս, իմ որոշումս արդէն որոշում է. դուն հոգդ խօսքերուն ականջ մի կախեր, ես տօքթէօռ Շաւարշը ընտրած եմ քեզի ամուսին. աղջիկս, այս տեսակ ամուսնական խնդիրներու մէջ կինները երիկամարդոցմէ աւելի ձեռնհաս են, մինչ աւելի հեռուն կը տեսնանք, անոնցմէ աղէկ կը ճանչնանք դէչն ու աղէկը... հոգդ առաջարկած բառերին, ատ Ադրիպաս աղայէ ինչ է, քեզի համար բոլորովին անյարմար է:

ՌՕԶ.— Այո՛, մայր, ես ալ այնպէս կը կարծեմ:

ԵՒՓ.— Կեցցես խելացի աղջիկս. այդ ամուսնութիւնը յղի է ապագայ մեծ դժբախտութիւններով և վատահ եմ որ քիչ առնէն իրար կը ձգէք, եթէ թող տալու ըլլամ որ իրար առնէք:

ՌՕԶ.— Ա՜հ, մայր իմ, հայրս համոզեցէք որ ետ կենայ այդ գաղափարէն. ետեւէս ինկեր է գիշեր ցորեկ:

ԵՒՓ.— Դուն հոգդ մ'ըներ, քանի որ ես ողջ եմ Ադրիպաս աղան չի կրնար Եւփիմէին աղջիկը առնել... Տէր Աստուած, կարելի՞ բան է այդչափ անուս, տգէտ...

ՌՕԶ.— Կոչտ...

ԵՒՓ.— Խաւարեալ:

ՌՕԶ.— Անբարեկիրթ:

ԵՒՓ.— Անճաշակ:

ՌՕԶ.— Տգեղ:

ԵՒՓ.— Ձէս դնող... պառկած գոլալը օձիքով:

ՌՕԶ.— Խոշոր քիթով:

ԵԻՓ.— Ես ատանկ մարդու աղջի՞կ մի կուտամ։

ՌՕԶ.— Ես ատանկ մարդ կրնա՞մ առնել։

ԵԻՓ.— Հոգդ մի ըներ աղջիկս, մայրդ հոս կեցեր է...

ՌՕԶ.— Սղէկ, բայց հայրս ալ անդին կեցեր է...

ԵԻՓ.— Մի վախնար... Բայց նայէ ոօթօր Շաւարշը ամէն կողմանէ քեզի յարմար ամուսին մըն է...

ՌՕԶ.— Հը... այո՛...

ԵԻՓ.— Ուսումնական, համալսարանական, պարզացած, գիտուն, բարեկիրթ, վայելուչ... Բայց ինչո՞ւ լուռ կեցեր ես։

ՌՕԶ.— Ինչ խօսիմ, դուն կ'ըսես կոր։

ԵԻՓ.— Վերջապէս ոօքթէօռ Շաւարշը քեզի համար մէկ հատիկ կատարեալ տիպար փեսացուն է։

ՌՕԶ.— Հը... այո՛...

ԵԻՓ.— Ի՞նչ է ան, շատ համոզուած չես երեւար կոր. մինչ ոօքթէօռ Շաւարշը չի՞ գոհացներ բոլոր ճաշակներդ։

ՌՕԶ.— Սիրելի մայր իմ, խնդիրը իմ հաւանութեանս վրայ չէ։ Ես իմ ծնողացս հնազանդ աղջիկ մ'եմ, հայրս համոզելու է, չես գիտեր որչափ հակառակ է ոօքթէօր Շաւարշին։

ԵԻՓ.— Ապերախտը... իրեն աքանտխախի պէս աքանչելի հիւանդութիւն մը գտած ըլլալուն համար կ'երեւայ թէ... Բայց անոր հակառակութիւնը կարեւորութիւն չունի, դուն ինծի ձդէ այդ գործը, միայն դուն պէտք է ինծի հնազանդիս, գիտե՞ս...

ՌՕԶ.— Բայց չեմ կրնար ալ ուղղակի հօրս դէմ ապստամբիլ, նայէ սիրելի մայր իմ դուն համոզէ զայն եթէ կրնաս, համաձայնեցէք իրարու հետ, ես ալ այն ատեն պատրաստ եմ ձեր որոշած մարդը առնելու։

ԵԻՓ.— Լաւ լաւ, այդ գործը կը կարգադրենք. հիմա ես երթամ նայիմ թէ ամէն բան կարգի՞ն է, տեսնեմ Սիսակը պէտք եղած պատրաստութիւնը ըրա՞ծ է այս թաւոերական սուարէին առթիւ... Մեր բարեկամները ուր որ են նէ կուգան... Հա, սիրելի Ռօզս, մասնաւորապէս կը յանձնարարեմ քեզի ոօքթէօռ Շաւարշը միւս անգամուան պէս պաղութեամբ մի վարուիր հետը. կիրկիր եղիր քիչ մը, չե՞ս տեսնար կոր ինք ինչ տաքարիւն մարդ է (դուրս կ'ելլէ)։

ՏԱՍԻ Ը.

ՌՕԶ (Առանձին).— *Թող մայրս կարծէ որ տօքթէօռ Շաւարշին պէս ղէվղէկ մը պիտի առնեմ, հայրս ալ կարծէ որ Ափրիսաս ուղայինն պէս կոշտ ու խըմպըլ մէկը պիտի առնեմ... Դուք ան մխաքին վրայ եղէք· ես իմ ամուսինս որոշած եմ, խնդիրը մինակ ժամանակ շահելուն վրայ է, մինչեւ որ Տիգրանը...*

ՏԱՍԻ Թ.

ՌՕԶ — ՍՐԹԻՆ ԱՂԱ

ՍՐԹ.— *Հա վարդուկ հոս ես եղեր, ես ալ քեզի կը փնտռէի կոր, խօսելիք ունիմ։*

ՌՕԶ.— *Մտիկ կ'ընեմ կոր։*

ՍՐԹ.— *Ինծի նայէ աղջիկս, ան տօքթէօռ Շաւարշը մէյ մը մխաքէդ հանէ, մօրդ խօսքերուն անկաճ մի կա֊խեր, աս տեսակ գործերու կնիկներուն խելքը չի հասնիր, իւրէ մօրդ խելքը հիչ չը հասնիր, ես քառասուն տարի է չարշին մարդու հետ կ'իյնամ կ'ելլամ կոր, ալ լինաս սարսափի եղանք, սանկ մէյ մը աչքով վերէն վար թարթ֊ըլ ընելու ըլլանք նէ մարդուն պօչը տօլուն, հաֆիֆը ծանրը, փարալըն փարասըզը, խելացին իւրէ հաբիթան կը հասկնանք, ան տօքթօռ Շաւարշին՝ իւրք տեսած օրէս ի վեր չհաւնեցայ։*

ՌՕԶ.— *Ես ալ հաւնած չեմ, հայրիկ, բայց ինչ ընեմ, դուն մայրս համոզէ որ ետ կենայ այդ գաղափարէն։*

ԱՐԹ.— *Հոգդ մըններ դուն աղջիկս, քանի քի ես հոս կեցեր եմ, տօքթօռ Շաւարշին պէս ղէվղէկ հաբիթա... ալաֆրանկա սուրաթը մարդու աղջիկ չեմ խառր...*

ՌՕԶ.— *Ես անանկ իմաստակ, թեթեւսօլիկ մարդ չեմ կրնար առնել։*

ՍՐԹ.— *Սֆերիմ աղջիկս, դուն հոգդ մի ըներ։*

ՌՕԶ.— *Հոգս չընեմ հայր, բայց մայրս ետեւէս է լինկեր, անպատճառ կ'ուզէ կոր որ խօսք տամ· դուն մայրս համոզէ, ես արդէն համոզուած եմ։*

ԱՐԹ.— Ատ գործը ինծի ձգէ դուն. ես եմ ատ տունին մէջը էմը ընողը, դուն իմին ետեւէս եկուր... Գանք հիմա Ագրիպաս աղային, տեսա՞ր մի պատուական վիճասցուն, վայլուն մարդը, պատուաւոր թիւճճար, հալը վախթը տեղը. բիացային վրայ 3—4 հազար ոսկի քոէտիթոյի տէր, քիպար, քիթը պերանը չէնք չնորք... Ծան չես հաներ կոր... ի՞նչ է ան... չէնէ Ագրիպաս աղան քիթիդ չես տանիր:

ՌՕԶ.— Սիրելի հայրս, խնդիրը իմ հաւնելուս չհաւնելուս վրայ չէ, մայրս համոզելու է, մայրս կ'ըսէ կոր որ անիկա առնելու ըլլաս նէ քեզի բէտտա կ'ընեմ:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՑՆՔ — ԵՒՓԻՄԷ

ԵՒՓ. (Մտնելով).— Ի՞նչ է ան, ի՞նչ կայ նորէն, դարձեալ աղջկանս խելքը կը դարձնես կոր...

ԱՐԹ.— Քու դարձուցածդ տեղը կը դնեմ կոր... (Ռօզ դուրս կ'ելլէ):

ԵՒՓ.— Ինծի նայէ, մէյ մըն ալ ատ Ագրիպասին խօսքը չպիտի ըլլայ ատ տունին մէջ:

ԱՐԹ.— Ի՞նչ ըսել է խօսքը չպիտի ըլլայ, մեր փիսացուն է նէ, խօսքն ալ պիտի ըլլայ, հարսնիքն ալ պիտի ըլլայ:

ԵՒՓ.— Մեր փիսացուն տօքթէօռ Շաւարշն է:

ԱՐԹ.— Մեր փիսացուն Ագրիպասն է:

ԵՒՓ— Չէ, Շաւարշն է...

ԱՐԹ.— Ագրիպասն է...

ԵՒՓ,— Շաւարշն է...

ԱՐԹ.— Ագրիպասն է...

ԵՒՓ.— Ինծի նայէ աղջիկ զաւակը մօրը կը վերաբերի, դուն չես կրնար խառնուիլ:

ԱՐԹ.— Անանկ է հա, ճէհէզը չընողը, դրախօսման տուողը դուն ես:

ԵԽՓ.— Պարապ խօսք չեմ ուզեր, Ագ-րի-պա-սը մեր վի-սա-ցուն չը-պի-տի ըլ-լայ, հասկցա՞ր... Ագրիպասը ծառայի տեղ անդամ չեմ առներ։

ԱՐԹ.— Ան քու չհաւնած Ագրիպասդ Տօքթ. Շաւարշին պէս քանի հատը ճէպէն կը հանէ։

ԵԽՓ.— Ամա՛ն ատէտի խօսք մըներ. տօքթէօռ Շաւարշին պէս վարպետ բժիշկ հատ մ'ալ չիկայ Պոլսոյ մէջ։

ԱՐԹ.— Վարպետ բժիշկ մի... նայինք չէնք չնորհք սիւրիւք մը փակցնելու ճամբան կիտէ՞...

ԵԽՓ.— Զլսեցի՞ր, Սայիտ բաշային փորէն երեք հատ քար հաներ է։

ԱՐԹ.— Հա իրաւ է... հէմ կիտե՞ս ի՛նչ ըրեր են ատ քարերը...

ԵԽՓ.— Ի՞նչ...

ԱՐԹ.— Չիմացա՞ր... երկուքը տէյիրմէն թաշլի ըրեր են՝ մէկն ալ Սուլթան Համամլին կէօպէք թաշլին ճաթեր է եղեր, անոր տեղը դրեր են... վայ քեզ քաղաք որ թաղաւորդ մանուկ է. ան ըսաւ դուն ալ հաւտացիր... անիկա մարդու փորէն քար չէ, մեզի պէս խախանորուն ճէպէն անճախ բարա հանել գիտէ։

ԵԽՓ.— Անիկա զարգացած, ուսումնական մարդ է, սուտ չը խօսիր, ձեզի պէս չարշըլը չէ քի տասը սուտը մէկ փարայի ընէ... բերանդ լուա և այնպէս խօսէ տօքթէօռ Շաւարշին վրայ, ապերախտ... ան չըլլար նէ դուն ո՞ւրտեղէն աբանոխոխի պէս չնորհքով, ազնուական հիւանդութեան մը տէր պիտի ըլլայիր։

ԱՐԹ.— Սա ալ կլլեցի՞ր... ի՞նչ հիւանդութիւն, ի՞նչ նաբանոխոխ, ի՞նչ աբանոըզի... Հէմ ինծի նայէ ասոնք պօշ խօսքեր են, Տօքթ. Շաւարշը վարդուկին էրիկը չկրնար ըլլալ, հէմ ալ չպիտի ըլլայ... կրցի՞նք հասկցնել։

ԵԽՓ.— Ինչ և իցէ, վիրջէն կը խօսինք այս նիւթին վրայ... Հիմա հիւրերը պիտի գան, գնա՛ չուտով հագուէ...

ԱՐԹ.— Հի՞ւր մի պիտի գայ...

ԵԽՓ.— Այո՛, զարմանալու ի՞նչ կայ... չե՞ս գիտեր

մեր ընդունելութեան գիշերն է... Հայտէ, մի տնտնար, գնա հագուստներդ փոխէ՛, ռըտէնկօթդ հագիր, լուսթրին կօշիկներդ դիր, պըռոյին վրայ քարձր եախա մը դրած եմ ան առ, չէնք չնորհք ձեւի մը մտիր ու եկուր, անկէ վերջը քեզի բան մը ըսեմ... շատ խօսքի մի խառնուիր հիւրերուն քովը. այո՛, ո՛չ, այնպէս է, իրաւունք ունիք. ասոնցմէ դուրս մ'եղլար, հասկցա՞ր...

ԱՐԹ.— Ինծի նայէ էֆֆիք, ինծի աս խըյաֆէթով խապուլ ընես նէ կը նստիմ... նէ Զաւիկ է նէ Ծնուռնդ քի սեւ ռըտէնկօթս իլէն լուսթրին քօթինս հագնիմ։

ԵԻՓ.— Սուառէ է սուառէ, խելքդ գլուխդ ժողվէ։

ԱՐԹ.— Սուառէն Զաւիկէն մե՞նծ է պէ... զաթէն գալիք մարդիկները ո՞վ են քի... աս գիւպպէ ալային չէ՞ մի... Ըսէ՛ նայինք ո՞վ պիտի գայ...

ԵԻՓ. (Ուռուցիկ).— Նախ պարոն Տիրան Տերեւեան, փեսուը լրագրին խմբագիրը...

ԱՐԹ.— Ծօ՛ աս ղազէթաճին, չէնկէլ պըյրխլը, խառղա քիթլի աս ուղուրսուզը... քա ան հոս կուգայ նէ մեզի ղազէթան անցունէ տէյի կուգայ... խելքդ գլուխդ բեր... զաթէն աս ղազէթաճիններէն փիս մ'իլլէթ կա՞յ մի, հառ-հառութենէն ուրիշ պան կիտե՞ն, ասոր անոր մինը խածնեն, աս ու ան իրար ձգեն, իրենք ալ մօրուքնին տնկեն խնդան... էյ տահա ո՞վ պիտի կայ...

ԵԻՓ.— Միւսիւ Լեւոն Դերձակեան։

ԱՐԹ.— Օհօ՛... աս ալօքաթը, աս միւղէվիր, առաւ փախաւ քեալըտ խալաֆին...

ԵԻՓ.— Պարոն Վահրամ Սհրիկեան։

ԱՐԹ.— Սա «եւ ընդ հոգոյդ քումն» խաֆալը այբ բէն գիմ սուրաթլը վարժապետը. ամէնը չորս ոսկի ամսական կ'առնէ՝ քիթին ծարէն իյնողը հազար բարկա կ'ըլլայ։

ԵԻՓ. (Բարկութեամբ).— Ալ հերիք է... բերանդ գոյէ... հիմակ... Սրդէն յանցանքը իմս է որ քեզի նստեր կը խօսիմ կոր... Հայտէ գնա տեղդ պառկէ. դուն ո՛վ ես, ասանկ մարդոց հետ տեսնուողը ո՛վ...

ԱՐԹ.— Էօյլէ եա, էօյլէ եա, մենք լայըխ չենք մի-

սիւնտրուպ հետ տեսնուելու, քնդի կը ձգեմ, բարով վայելես, մինակ շատ բաթըրար չընէք, չարթնուամ հա քունէս, սօնրա ձեր սուառէյին գլխուն փորձանք կուգայ... (Դուրս կ'ելլէ):

ԵՒՓ. (Առանձին).— *Էօ՛ֆ, վերջապէս աղատեցանք, իմ ալ ուզածս աս էր արդէն, հիւրերուն առջեւ անանկ պաղ բաներ կ'ընէ որ վրաս տաք տաք քրտինք կ'իջնայ։ Երթամ սենեակս վերջին նայուածք մը ձգեմ թուալէթիս վրայ,* (դուրս կ'ելլէ):

ՏԵՍԻԼ Բ.

ՍԻՍԱԿ — ԼԵԻՈՆ

ՍԻՍ. (Առաջնորդելով).— *Հրամմեցէք, մտէք, խնդրեմ..,*

ԼԵԻ. Ձեռքը տսլիէ մը).— *Մարդ չէ եկեր դեռ... Տիկինը և օրիորդը ո՞ւր են...*

ՍԻՍ.— *Հիմակ կուգան...* (Դուրս կ'ելլէ):

ԼԵԻ.— *Թան միէօ... ես ալ արդէն ստիպողական գործեր ունիմ, մինչեւ անոնց գալը ուսումնասիրեմ,* (տսլիեն կը բանայ՝ մէջեն թուղթեր կը հանէ, աթոռներուն, սեղանին վրայ, գետինը կը տարտղնէ, գրիչ, մելան կը հանէ, կ'սկսի նայիլ, գրել, ջնջել, թուղթին մեկը կը ձգէ միւսը կ'առնէ եւայլն. ինքզինքեն խոսելով).— *Այո՛, այս դատը Հուգուգի վերաբերեալ դատ մ'է, հետեւաբար Թիճարէթի դատարանին իրաւասութենէն դուրս է, այս կէտը պէտք է վեր հանեմ քոնքլիւզիոններուս մէջ։*

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆ—ՇԱԻԱՐՇ—ԳԱՌՆԻԿ

ԳԱՌ.— *Հրամմեցէք տօքթէօռ, նեռս մտէք...*

ՇԱԻ.— *Պօնժուռ մէթր...*

ԼԵԻ.— *Բարեւ, սիրելի տօքթէօռ, նստեցէք խնդրեմ... Ներեցէք, ուշադրութիւն, դատական վճիռ մը ստնակոխ կ'ընէք կոր...* (Շաւարշ նսեելու կ'ըլլայ) *Խնդրեմ, տակերնիդ բռօթէսթօ մը կայ կարծեմ։*

ՇԱԻ. (Ծաղրական).— *Տիդտօն, մէթր.. ի՞նչ է սա... պիւռօնիդ հո՞ս փոխադրեցիք...*

ԼԵՒ. (Թուղթերը ժողվելով).— Չէք գիտեր, սիրելի տօքթէօռ, որքան գործ ունիմ, գլուխս քերելու ժամանակ չունիմ։

ՇԱՒ.— Ատ է նէ բան մը չէ, ձեզի հրաշալի դեղ մը կուտամ անմիջապէս գլխուներդ քերուըտուքը կ՚անցնի... (Նոյն միջոցին Գառնիկ ներս կը մտնէ եւ դրան մօտ կեցած մտիկ կ՚ընէ)։

ԼԵՒ.— Ձգենք գլուխս քերելը, ճաշելու ժամանակ ալ չունիմ... Գիտէ՞ք առաւօտնէ ի վեր ամբողջ կերածս ի՞նչ է, հինգ փարանոց սիմիթ մը, անոր ալ կէսը կրցայ ուտել։

ՇԱՒ.— Ձեզի հապ մը տամ կրնա՞ք օրերով ապրիլ առանց բան մը ուտելու։

ԳԱՌ. (Մեկուսի).— Ես ատ հապը չեմ կրնար կոր կըլլել... ամմա աղէկ իրար գտան, սատկէին սէյրը ընենք սա երկու ճամպաղներուն մէկ չուանի վրայ խաղալը...

ԼԵՒ.— Ձեմ կարծեր որ ինծի չափ ղբաղած ըլլաք, սիրելի տօքթօր... Տեսէք մխիթայն առաւօտնէ ի վեր ըրած գործերս թուեմ, պիտի սարսափիք մնաք, ի՞նչ առաւօտնէ ի վեր, կէս գիշերէն սկսայ, տօքթօր, կէս գիշերուընէ... այո՛... երազիս մէջ ահագին դատ մը վարեցի, ձեռքս գտնուող դատերէն մէկը, ժամերով խօսեցայ, հակառակորդիս փաստերը մէկիկ մէկիկ կտոր կտոր ըրի, դատաւորները համոզեցի, ընդհանուր դատախազին բերանը գոցեցի, վերջապէս ինծի նպաստաւոր վճիռ մը արձակուելու վրայ էր երբ որ արթնցայ... Այս յուզումէս և յոգնութենես չնչասպառ, անկողինէս վար ցատկեցի, անցայ գրասեղանիս առջեւ, երեքուկէս ժամ անընդհատ գրեցի, ամբողջ Սողոմոն աղային ժառանգական դատին տօսիէն պատրաստեցի։

ՇԱՒ.— Սողոմոն աղա՞ն... այս առտու կանուխ հս ալ հոն էի օբէրասիօն մը կատարեցի շատ յաջող անցաւ. վէրքը կարգի դրի, կարեցի, կարկտեցի, գոցեցի, յետոյ Մարկոսեան Յակոբ էֆէնտիէն լուր եկած էր...

ԼԵՒ.— Յակոբ էֆէնտի՞ն... Հուգուգի առջեւ այսօր մէկ ամենակարեւոր դատը տեսնուելցաւ, քառասուն տարիէ

իվեր առկախ մնացած դատ մը ունէր, ես երեք ժամուան մէջ կարեցի նետեցի։

ԳԱՌ.— *Կեցցէ պէ՛...։ Սաանկ չաւլաթան ազբթօուին առանկ կէվէղէ փաստաբան մը պէտք է։* (Դուրս կ'ելլէ)։

ԼԵԻ.— *Հուգուգէն ելայ չիտակ Թիճարէթի մտայ, չորս ժամ ալ հոն գատաւարեցի, Մամիկոնեան Սիմոն էֆէնտիին դէմ խնամակալի հանգամանքով, անչափահաս Վարդենիկի ազգականներուն կողմէն բացուած դատը որ...*

ՇԱԻ.— *Մամիկոնեան Սիմոն էֆէնտին... Մարդը մեծ վտանգէ մը ազատեցի այս ցերեկ... Կռնակին ճիշտ մէջտեղը ուռեցք մը գոյացեր էր, բժիշկները բան մը չէին հասկցեր. ես գացի, տեսայ, հասկցայ, ճեղքեցի, մաքրեցի էս ամբն ալ մէջէն կէս օխայի չափ շաքար դուրս եկաւ. վերջապէս լմնցուցի այդ գործը և Կոմանեան դեղարանը գացի...*

ԼԵԻ.— *Կոմանեա՜ն... Անոր դէմ սոսկալի դատ մը յանձնուած է լինելու... Կ'երեւայ թէ սխալ դեղափիր մը շինուեր է, որ քիչ մնացեր է մէկու մը մահուանը պատճառ ըլլայ եղեր։ Կոմանեանը կը պնդէ թէ յանցաւորը ազբթէօուն է, նոր եկած հայ բժիշկ մը, կ'երեւայ թէ համբակ մէկը... դեռ անունը հաղորդած չէ լինելու...*

ՇԱԻ. (Շփոթած).— *Այդ խնդիրը ծանօթ է լինելու... Դեղարանին աշկերտն է յանցաւորը։*

ԼԵԻ.— *Ինձի հակառակը ճիշտ կ'երեւայ... Ես այնպէս համոզուած եմ որ յանցաւորը ազբթէօուն է և պէտք է որ խստօրէն պատժուի, առնուազն երկու տարի բանտարկութիւն կայ։*

ՇԱԻ.— *Խնդրեմ. խնդիրը լաւ չքննած վճիռ մի արձակէք։*

ԼԵԻ. (Մեկուսի).— *Բայց ինչո՞ւ կը յուզուի կոր...*

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՑՆՔ — ԵՒՓԻՄԷ

ԵՒՓ.— *Օ՛, ազբթօր, մէթր... բարի էք եկեր։*

ՇԱԻ.— *Բարի տեսանք, տիկին։*

ԼԵԻ.— *Բարի տեսանք։*

ԵԻՓ.— Ի՞նչպէս էք նայինք տօքթէօռ, մէթր...
ՇԱԻ.— Միշտ հիւանդներու հետ, տիկին...
ԼԷԻ.— Միշտ դատերու հետ, տիկին...
ԵԻՓ.— Ուրեմն միշտ չափազանց զբաղա՞ծ էք։
ԼԷԻ.— Օ՛հ... այո՛, այո՛...
ՇԱԻ.— Այո՛, այո՛... մէկ հիւանդէն միւսը...
ԼԷԻ.— Մէկ դատէն մէկալը...
ՇԱԻ.— Ֆրանսական հիւանդանոցէն՝ Յունականը...
ԼԷԻ.— Հուգուգէն՝ Թիճարէթ...
ՇԱԻ.— Տուննէն՝ դեղարան...
ԼԷԻ.— Պիւռոյէն՝ դատարան...
ՇԱԻ.— Առտուն օքէռասիոն մը...
ԼԷԻ.— Ցերեկը դատավարութիւն մը...
ՇԱԻ.— Իրիկունը քօնսիւլթասիոն մը...
ԼԷԻ.— Գիշերը քօնքլիւզիոն պատրաստել...
ՇԱԻ.— Դեղագիր...
ԼԷԻ.— Դատավճիռ...
ՇԱԻ.— Մէկը սաթլըճանէն պառկած...
ԼԷԻ.— Միւսը անանկացած...
ՇԱԻ.— Որը փորին մէջ ուռեցք մը ունի...
ԼԷԻ.— Որը աներոջը դէմ դատ մը ունի...
ՇԱԻ.— Վերջապէս չերկնցնեմ, գլուխ...
ԼԷԻ.— Ինքզինք...
ՇԱԻ.— Ժամանակ...
ԼԷԻ.— Չունինք...

ՑՈՒՍԱՀԱՆԴԷՍ Ը.

ՆՈՅՆՔ—ՍԻՍԱԿ—ՏԻՐԱՆ—ՌՈՍՏՈՎ—ՎԱՀԱՆ—ԳԱՌՆԻԿ

ՍԻՍ. (Հիւրերը ներս մտցնելով) — Հրամմեցէք, Տեարք։

ՏԻՐ. (Բարեւներ, խոնարհութիւններ, Ռոստովը Եւփիմէին ներկայացնելով).— Տիկին և պարոնայք, պատիւ ունիմ ձեզ ներկայացնելու պարոն Աբգար Նիկողայոս Ռոստով Մէլիք Տէր Ղազարեանց, կովկասէն նոր եկած համալսարանական

մը, Թիֆլիսի պարտացնալ երևոյթաբարդութեան ամէնէն փայլուն ներկայացուցիչներէն... Տիկին Եւփիմէ, տանտիրուհին, Պոլսոյ էնտէլիգէնտ սալօններուն ամէնէն փայլուն պարծերէն մէկը...

ԵՒՓ.— Զափազանց երջանիկ եմ ձեզի ճանչնալուս:

ՌՈՄ.— Ես էլ նմանապէս... Միայն, տիկին, պէտք է ներում խնդրեմ ձեզանից իմ շորերի մասին... հէնց երէկ հասել եմ Պոլիս, սեւ շորերը տակաւին մաքսումն են ճնա-ցել, պէտք է վաղը դնամ վեր առնեմ...

ԳԱՌ. (Մեկուսի).— Ա՛ս պակաս էր... ի՞նչ պիչիմ լեզու է պէ, ի՞նչ կ՛ըսէ կոր... Մաքսումն սեւ շորերը ի՞նչ պիտի ըլլայ... (Դուրս կ՛ելլէ):

ՇԱՒ.— Տիկին, ձեր աղնիւ ամուսինը ո՞ւր է... արդեօք հոս չէ՞...

ԵՒՓ.— Չէ, քիչ մը տակաւ ըլլալուն իր ննջասենեակն է:

ՇԱՒ.— Տկա՞ր է... Ուրեմն քովը երթամ:

ԵՒՓ. (Դող ելլելով).— Չէ, տօքթէօռ, անհանդիստ մի ըլլաք, բան մը չէ... Կարելի է բոլորովին անցած է, հիմա կուգայ... (Ժպտելով) Արդէն, սիրելի տօքթէօռ, կարծեմ այս իրիկուն բժշկութիւն ընելու եկած չէք...

ՇԱՒ.— Անշուշտ... Բայց և այնպէս...

ՏԻՐ.— Տիկին, կ՛ուզէ՞ք որ անմիջապէս մեր ներկայացումովը զբաղինք, խօսակցութիւնը վերջի կը ձգենք:

ԵՒՓ.— Ինչո՞ւ չէ... արդէն ես ալ անհամբեր եմ:

ՀԻՒՐԵՐԸ.— Այո՛, այո՛... սկսինք...

ՏԻՐ.— Ուրեմն բեմը պատրաստենք:

ԵՒՓ.— Արդէն պատրաստուած է...

ՏԻՐ.— Մաղիս ոգին անշուշտ լաւ մը ըմբռնած էք... Իմ նիւթս է համադրական ամփոփ պատկերի մը մէջ մարդկութեան ներկայացնել արդի ընկերութիւնը մրցակցաբար վարող երկք գլխաւոր ուժերը, այն է, արուեստ և գրականութիւն, գինուորականութիւն և վաճառականութիւն, այսինքն խոհալը, բարին, գեղեցիկը և ճշմարիտը, նիւթական բիրտ ուժը և դրամը... Իտէալը աղնուօրէն

պիտի ներկայացնէ Տիկին Եւփիմէ, դինուորականութիւնը դիւցազնօրէն պարոն Վահան, իսկ վաճառականութիւնը ձեր խոնարհ ծառան... Օ՛ն սկսինք գործի (դերակատարները կը ծպտուին ու բեմ կ՛ելլեն, հիւրերն ալ կը շարուին ու կը նստին).

ԵՒՓ.— Ո՛հ հոգիին երկնասլաց թռիչքը իրականութեան և նիւթին ճախճախուտ տափակութիւններէն դէպի իտէալին ձիւնապատ Մասիսները:

ՀԻՒՐ.— Կեցցէ՛ (Ծափեր):

ՎԱՀ. (Սուրը ձեռքը շարժելով).— Յառաջ, յառաջ դէպի արիւնի և նախճիրի ու դիւցազնութեան նուիրական դաշտերը... Ո՛վ իմ սիրական սուրս, աղատութեան պողպատեայ փայլակ, եկուր որ համբուրեմ զքեզ ու թող այս համբոյրը խօսք կապի օղակ մը ըլլայ մեր ճակատագիրները յաւիտենօրէն իրարու նշանող: (Սուրը կը համբուրէ):

ՌՈՍ.— Մենք որ սրանց հոսհոսներ ենք անուանուամ, իրաւունք ունինք եղել...

ՏԻՐ. (Ձեռքը կանգուն մր եւ կտոր մր կտաւ բռնած).— Ահա կանգունը և ահա կտաւը... Կտա՛ւ... Ո՛վ քաղաքակրթութեան և խաղաղութեան հրեշտակ... Ո՛վ կտաւ, զքեզ արդեօք ո՞վ գտաւ... Ինձնէ է. որ կը շինուին մեր հանգստաւէտ անկողիններուն սաւանները, խաղաղութեան դրօշակները, բաղմոցներուն երեսը, մեր շապիկները ու պատանքները, մեր հարսանեաց զարդազգեստները, և սուգի հանդերձանքը:.. դուն անհուն ես, անսահման ես արարչութեան պէս:. և զքեզ միայն այս կանգունը կրնայ չափել (կանգունը վեր առնելով) ո՛վ կանգո՛ւն նախախնամութեան խորհուրդներէն զատ կա՞յ բան մը որ չի կարենաս չափել...

ՎԱՀ.— Կորի՛ր աչքիս առջեւէն, ո՛վ անարիւ գործիք չահու և կեղծիքի, որչափ ատեն որ դուն կանգուն մնաս, յուսաբեկ պիտի մնան բոլոր դիւցազնական խանդերը... քանի որ առիթը ներկայացաւ, պէտք է որ արժանի պատիժդ կրես, օ՛ն յասպարէզ մենամարտի (սուրը վեր կը բարձրանայ):

ՏԻՐ.— Ո՛վ անագորոյն գործիք մահու և աւերածի պղծութեան։

ԵԻՓ. (Երկուքին մէջ կը բռնէ ծաղկեայ ճնարը).— Օ՛ն, եղբարք, զարկէք, եթէ կը համարձակիք, այս ներդաշնակութեան թրթռուն գործիքին, զարկէք բայց մտիկ ըրէք անոր խաղաղութեան և հաշտութեան երգը։ (Դուրսէն նուագի մը ձայն կը լսուի եւ կամաց կամաց ուրը ու կանգուները կ'իյնան ձեռքերէն, ախոյեանները գլուխնին կը ծռեն, ի վերջոյ ծունր կուգան, ԵԻՓ. իւր գլխու պսակը անոնց գլխուն կը դնէ: Ծափահարութիւն, կեցցէներ, Արքին աղա սարսափած դուրս կը նետուի սենեակէն գիւերազգեստով. գլուխը ուսկուցա, ձեռքը մոմ մը):

ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՑՆՔ — ԱՐԹԻՆ Ա. Դ Ա.

ԱՐԹ.— Էֆթի՛կ, ի՞նչ խաղքութիւն է աս, ի՞նչ... ի՞նչ կ'ըլլայ կոր, ո՞ւր հնք... մէյ մը աս տեղէն վար իջիր նայիմ... հիմա կուգամ քեզ օտքիս տակը կ'առնեմ։

ԵԻՓ.— Ամուսինս, Բասքալը, գիշերազգեստով՝ ուսկութայով, ա՜հ... (Մարելու պես կ'ըլլայ, Տիւրան եւ Վահան թեւերնուն մէջը կ'առնեն զինքը):

ԱՐԹ.— Ոտքի եղի՛ր, քեզի կ'ըսեմ կոր, չէնէ հիմա օրթալըխը տակն ու վրայ կ'ընեմ։ (Եւիլիմեն դուրս կը հանեն):

ՌՈՍ. (Sofporին),— Պարոնը շատ լաւ է կատարում իր նախանձոտ ամուսնոյ ռօլան.. կատարեալ միմիքայով և...

ՇԱՒ.— Ի՞նչ ռօլա, ի՞նչ միմիքա...

ԱՐԹ. (Բեմին վրայ յառաջանալով եւ ծափահարելով).— Պռավօ պէ, աֆէրիմ... թո՛ւ խալխնուդ խըչաֆէթնուդ, չամչցած չխպնածներ... թո՛ւ ձեր ուսմունքին ալ թէրպիյէին ալ, ձեր Բարիզին ալ, ալաֆրանկային ալ, ձեր ուօքթօրութեան ալ, ավօքաթութեանն ալ, դաղէթաճութեանն ալ, վարժապետութեանն ալ... թո՛ւ.. մօրուքներս

նէ՞դ, պըյըխնեռնէ՞դ ալ չէք ամչնար կոր պէ... իմին տունս Շահզատէպաշըին թէաթրո՞ն է չէնէ մի Պէյօղլուի չանթաններըը, աս ի՛նչ խախկուբթիւն, աս ի՛նչ խայտառակուբթիւն է պէ, մահալլէն պիւբթիւն օտք նլաւ, քունիս մէջէն տափտուբի եկայ... մէկ բաթըրտը մը քի... կը կործանի՞նք կոր, կրա՞կ կայ, մա՞րդ կը մնուցնեն կոր, մա՞րդ կը մնունի կոր, վերջին դատաստանին ո՞րն է, ի՞նչ է ըսի... չէ մէյէր մեր միւսիւնները թէաթրո կը խաղան կոր եղեր... Թո՛ւ չամչցածնեռ, աման խապահաթը ծնրինը չէ, խապահաթը մեր կնիկ օլաճախինն է քի ծնղի պէս մխաֆիրի զաւակնըը կըլոխը ժողվեր է տէ աւանկ ռէզիլուբթիւննեռ կ'ընէ... իմ քառասուն տարուան պատիւս մէկ փարայի ըրիք...

ԼԵՒ.— Պարո՛ն, կարծեմ նախատական բառեր դործածեցիք, որուն համար պատիւ կը պահանջեմ...

ԱՐԹ.— Ո՞ր պատիւդ ծօ՛... դուն ո՛վ, պատիւ ունեցողը ով...

ԼԵՒ.— Լսեցի՞ք, պարոննեռ, ինծի եղած նախատինքը, (ցոպիեն կը հանի եւ բաներ մր կը գրէ), վկա՞յ էք նա... Պարո՛ն, դատարանին առջեւ կը տեսնուինք։

ԱՐԹ.— Տէֆ եղիր սըկէ, միւղէվիր, ճիւպպէսիլ ալօքաթ տուն ա... սըվոր նայէ, սա քէբաղէյին, դաս պիտի բանայ եղեր։

ԼԵՒ. (Ցոպիեն մոռնալով դուրս ելլալու ատեն).— կը տեսնուի՛նք, կը տեսնուինք։

ԱՐԹ. (Շաւարջին fով երթալով).— Սա դուռը կը տեսնա՞ս կոր, հայտէ նայիմ, հէմ մէյ մը տահա աս դուռին էշիկէն ներս մտնաս նէ օտքդ կը կոտրեմ...

ՇԱՒ. (Քմծիծաղով).— Սրթին աղա, ամէնքը կրնան երթալ, բայց ես պէտք է որ մնամ, բժիշկին պարտականութիւնը կը պահանջէ որ չբաժնուի իր հիւանդին քովէն, անանկ ատեն մը մտնաւանդ ուր ամէնէն աւելի պէտք ունի իր խնամքին։

ԱՐԹ.— Ճէհէլլէմ եղիր սաստեղէն, դո՛ւրս դո՛ւրս... պա-

կաս ըլլայ քեզի պէս ոօքթօռը (Թեւեն բռնելով դեպի դուրս կ'առաջնորդէ)։

ՇԱՒ (Զայրացած).— Պարո՛ն կը համարձակի՞ք բժիշկի մը վրայ բռնութիւն բանեցնել, յաւ մտածեցէք միւսիւ Բասքալ։

ԱՐԹ.— Բասքալը դուն ես, բայլաջօ սուրաթլը։

ՇԱՒ.— Յաւ մտածեցէք, ես կ'երթամ այս տեղէն, բայց մի մոռնաք ըսածս, տարի մը չանցած դուք ալ անդիի աշխարհ կ'երթաք շնորհիւ ձեր աբանտախխին, զոր ես միայն կրնայի բուժել... Ճնաք բարով (Դուրս կ'ելլէ)։

ԱՐԹ.— Աա ալ ճամբեցինք...

ՎԱՀ. (Հեգնօրէն).— Մնաք բարով Արթին աղա, որքան որ անհանգիստ ըրինք նէ ներեցէք... (Դուրս կ'ելլէ)։

ԱՐԹ.— Աա ալ կընայ (Տիրացին) Դուն ի՞նչ կեցեր ես։ դուն ալ բայըդ կ'ուզե՞ս կոր...

ՏԻՐ.— Ես կեցեր եմ և մինչեւ վերջը պիտի կենամ, որպէս զի այս եղածները լաւ մը տեսնեմ, քննեմ, ուսումնասիրեմ, և վաղը լրագրիս մէջ քեզի վերէն վար խայտառակեմ։

ԱՐԹ.— Խայտառակը դուն ես...

ՏԻՐ.— Որովհետեւ, պարո՛ն, դուք իրաւունք չունիք նախատելու ձեր հիւրերը, որոնց ներկայութիւնը պատիւ մըն է ձեր տան համար։

ԱՐԹ.— Քեզի պահէ աա պատիւը...

ՏԻՐ.— Դուք այս իրիկուն չարաչար նախատեցիք քաղաքակրթեալ ընկերութեան մեծագոյն ներկայացուցիչները մարդը՝ այսինքն ես, դիւռութեան մարդը՝ ոօքթօռ Շաւարշ, իրաւունքի մարդը՝ մէթր Գերձակեան, դաստիարակութեան մարդը՝ միւսիւ Վահանը...

ԱՐԹ.— Աա քու բոլոր մարդիկդ բապուճխա հետ չեմ փոխեր։

ՏԻՐ.— Մնաք բարով, վաղը կը տեսնուինք... թերթիս մէջօգայաւ։ (Դուրս կ'ելլէ)։

ԱՐԹ.— Տէֆ եղիր սըկէ, մայմղուն սուռաթլը հէրիֆ դուն ալ... (Ոոսոով այս տեսարանին՝ անկիւն մը խոշուած կը դիտէ գլխու երերումներով, Արթին աղա խնճիքը միւնակ կարծելով) Օ՛խ... հէյ օրթալըխը թէմըզցուցինք. տասը

տարի է աս ֆըրսանթինկ կը պէքլէի կոր, աւօր մուրատիս հասայ, աս չէօբտէն չէլէպիները աւել ֆարաշով հէլէ դուրս նետեցինք... տասը տարի ակռայ կը կոճտէի, մէկ սաաթէն ալ էօճըս հանեցի... օ՛խ սիրտս պաղշկեցաւ պէ (կը ցսցի) հախ չունի՞մ մի ամա...

ՌՈՍ. (Ծափահարելով).— Պռաւօ՛...

ԱՐԹ.— Ծօ տահա մարդ մնացեր է... աս ո՞վ է...

ՌՈՍ. (Ձեռքը երկնցնելով).— Թոյլ տուէք ինձ իմ կօմբլիմէնթները յայտնել ձեզ. շատ յաւ կատարում էք ձեր ռօլան, երեւի դա Պոլսական կեանքից վեր առնուած մի պիէսա է... ախեր չեմ հասկանում... ասացէք խնդրեմ, աւարտե՞լ է ներկայացումը, թէ չէ մի վերջին տեսարան էլ կայ:

ԱՐԹ.— Ի՞նչ կ՛ըսես կոր պէ... աս զիւպպէն ուրտեղէն ելաւ... Ո՞վ ես տուն միւսիւ...:

ՌՈՍ.— Ես Կովկասից հէնց երէկ առաւօտ ժամանած մի համալսարանական եմ և կոչւում եմ Աբգար Նիկողայոս Ռոստով Մելիք Տէր Ղազարեանց...

ԱՐԹ.— Աա ի՞նչ խալապալըխլը անուն է: (Տիրացու ցերս կը մտնէ):

ՏԻՐ.— Հա՛, հո՞ս էք եղեր պարոն Ռոստով, ես ալ ձեզ կը փնտռեմ, եկէք չուտով դուրս ելլենք աս տունէն.

ՌՈՍ.— Ի՛նչ, պիէսան վերջացա՞ւ... ո՞ւր են մխիս աքթիօռները:

ՏԻՐ.— Ի՞նչ պիէսա...

ԼԵՒ. (Ներս մտնելով).— Տօսիէս, պարոն, տօսիէս. այնչափ բարկութեամբ դուրս ելայ որ հոս եմ մոռցեր, կարեւոր թուղթեր կան մէջը, վաղուան դատերուս վերաբերեալ:

ԱՐԹ.— Աս ի՞նչ է ծօ, նորէն կուգան կոր...

ՌՈՍ. (Իր տեղը անցնելով մեկուսի).— Երեւի պիէսան չէ աւարտել, մեր տեղը անցնինք, տեսնենք վերջին տեսարանը ի՛նչպէս դուրս կ՛գայ...

ՎԱՀ. (Ներս մտնելով).— Ներեցէք պարոն Աբգար Նիքօլայեվիչ Ռոստով Մելիք Տէր Ղազարեանց, մոռցայ

ձեզմէ հրաժեշտ առնելու. մնաք բարով, անշուշտ նորէն կը տեսնուինք։

ՌՈՍ.— Ախեր մեկնո՞ւմ էք, ալ դեր չունէ՞ք պիէսայում։ (Շատարը ներս կը մտնէ)։

ԱՐԹ. (Կատղած).— *Ծո՛ աս ի՞նչ օյին է, նորէն լեցուեցան... ես հիմա անոնց հախէն կուգամ։*

ՇԱԽ. Արթին աղային).— *Պարոն, վիզիթաններս, տասը այցելութիւն ըրած եմ կէս կէս ոսկիէն հինգ ոսկի կ'ընէ, ալօ՛ն չուտով վճարեցէք...*

ԱՐԹ.— կեցիր երթամ պետիմ։ (Բարկութեամբ դուրս կ'ելլէ)։

ՇԱԽ.— Փախի՛նք, աքսանախիտը բռնեց։ (Դուրս կ'ելլէ)։

ՌՈՍ. (Ծափահարելով).— *Ես տրամա կարծում էի, բայց երեւի կօմէտիա է... Ներողութիւն պարոն, պիէսան աւարտո՞ղ է...* (Արթին աղա բեմ կուգայ ձեռքը գաւազան մը առած)։

ԱՐԹ.— Ծօ դուն ի՞նչ երկու սահաթ է թուխխալի պէս փակեր խաֆա տիւտիւկլէմիշ կ'ընես կոր պէ՛ հէրիֆ... դուրս ելիր սըտեղէն։

ՌՈՍ.— Երեւի պիէսայի պահանջքն է դա... կամաց կամաց կ'ելլէ)։

ԱՐԹ.— Էօ՛ֆ պէ՛, վայ չունչանորդիներ վայ։

ՌՈՍ. (Ներս մտնելով).— *Բայց խնդրեմ ասացէք, պիէսան աւարտո՞ղ է։*

ԱՐԹ.— Ծօ ատհա հո՞ս ես... (Բարկութեամբ վրան կը վազէ)։

ՎԱՐԱԳՈՅՐ

Գ. ԱՐԱՐՈՒԱԾ

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Տեսարանը Ա. վարագոյրը կը ցերկայացնէ

ՏԵՍԻԼ Ա.

ՌՕԶ

ՌՕԶ (Առանձին).— Նորէն երկար բարակ վիճաբանութիւն մը ունեցայ հօրս հետ... Իրեն հասկցուցի որ Ադրիպաս աղան չեմ ուզեր, սաստիկ բարկացաւ, հօրս քովէն ելայ մայրս օձիքէս բռնեց. դեռ տօքթէօր Շաւարշը միտքէն չէ հանած, ինչ ընելս չեմ գիտեր... բայց չէ չըլլա՛ր, չեմ ուզե՛ր, չեմ ուզե՛ր, ոչ Ադրիպասը պիտի ըլլայ իմ ամուսինս, ոչ ալ տօքթէօր Շաւարշը... աւելի լաւ կը համարիմ անձնասպան ըլլալ քան թէ իմ սրտիս չընտրած ճաշակով, քնաւորութեամբ, դաստիարակութեամբ ինծի բոլորովին հակառակ մարդու հետ ամուսնանալ... Ի՜նչ մեծ դժբախտութիւններ կրնան ծագիլ անյարմար ամուսնութիւններէ, ծնողացս օրինակը ահա մէկտեղն է, ամէն օր վէճ, ամէն օր կռիւ, նախատինք, իրար չհասկնալ, իրար վիրաւորել, սրտադող, իրարանցումի, վերջապէս դժոխք, և կ'ուզեն դիս ալ նետել այդ դժոխքին մէջ... չէ, չէ, չպիտի մտնամ... իմ երազս, իմ իտէալս է ամուսնութիւն մը փոխադարձ սիրոյ և հասկացողութեան վրայ հիմնուած իրարու գաղափարակից, սրտակից էակներու լծորդութիւն մը, որ տարիները հետզհետէ ամրապնդեն փոխանակ լուծելու, և այս միայն չի բաւեր, այս չէ միայն ըստ իս երջանիկ ամուսնութեան մը ամբողջ դրամագլուխը... Նիւթականն ալ պէտք չէ մոռնալ. ես անանկ հիմակուան աղջիկներուն պէս ցնորական գաղափարներ չունիմ, կ'ուզեմ որ իմ ամուսինս հոգւի մը և մարքի մը հետ խանութ մ'ալ ունենայ, ուսումնական ըլլայ, աղնիւ ըլլայ, բայց նաեւ գործի մարդ ըլլայ. առանց Ադրիպասին նմանելու բարեկիրթ ըլլայ, առանց իմաստակութեան... վերջապէս չի նմանի աս տօքթէօր Շաւարշին պէս ղէվզեկներուն... ա՜հ Տիգրանս... ահաւասիկ իտէալիս համապատասխանող միակ ամուսինը... գործունեայ, դրական, խելացի, միեւնոյն ատեն մեծ զարգացումի տէր, աղնիւ ղեցումներով, բարձր գաղափարներով.

ՏԵՍԻԼ Ը.

ՌՕԶ — ԳԱՌՆԻԿ

ԳԱՌ.— Բարի լոյս վարդուհի, մինաւոյ ես...

ՌՕԶ.— Բարեւ մօրեղբայր... ա՜հ ինչ պիտի ըլլայ իմ վիճակս, մէկ կողմէն հայրս ոտք կը կոխէ որ Ադրիապատ աղան առնեմ, մայրս ուզածէօր Շաւարշը, իսկ սիրտս ալ կը պնդէ որ Տիգրանը առնեմ... ա՜խ ինչ ընեմ մօրեղբայր, դուն աղատէ ինծի այս յուսահատ վիճակէս... բաւական առին է Տիգրանէն լուր չունինք. ինչ ըրաւ գործը յաջողցուց, չեմ գիտեր...

ԳԱՌ.— Առ սա նամակը տէ կարդա, աղջիկս։

ՌՕԶ (Վրաց ցայելով).— Տիգրանէն է... (կ՚սկսի ձայնով կարդալ).

«Սիրելի Գառնիկ աղա,

«Կուգամ այսօր յաղթութիւն աւետելու,

«ձրիք տարուան դիւցազնական ջանքերս յաջո-

«պակուեցան, երէկ իմ փափաքիս հասայ, պայմ-

«թիւն մը կնքեցի վարպետիս հետ, որով այլեւս

«իր պաշտօնեան ըլլալու՝ իր ընկերն եմ։ Ալիսը չէ՞ մտեր։

«քը, որովհետեւ կը յուսամ որ ոչ Սրթինայ).— Ա՜հ, այս

«Տիկին Եւփիմէն կրնան առարկութիւն

«մուանութեան դէմ, և ըսէք իրեն որ եղբօրդ էք, ինչ

«յուսացածէն աւելի մօտ է»։ լոր։

— Ա՜հ... վերջապէս։ ..ին չեմ եղեր... բա-

ԳԱՌ.— Ես քեզի չէի՞ ըսեր Թաւութիւննիդ ինչպէս է...

ՌՕԶ.— Բայց հա՞յրս, Ադրխիկինը ինչպէս է, օրիորդը

ԳԱՌ.— Ամօքը մէջերնիս

րուած են, անանկանալու վը առողջ ենք, փառք Աստուծոյ, անանկացած։ ոք կոր... ինչ հապէ որ կէլեր էք։

ՌՕԶ.— Ո՜հ, ինչ լ՚Հա, բան... բան չէ... հապ չէ...

ԳԱՌ.— Անոր ալ ոչխարս կը ցաւէր կոր տէ անթիբի-

աօր վաղը ծակը պիտի ուրիշներուն միշտ հապ տուած եմ, ւանդներուն նայիլու։ քեզ, մանաւանդ ասանկ հապ մը...

ՌՕԶ.— Ինչ կ՚ըսէ՛, կ՚երեւայ կոր։

ԳԱՌ.— Հապա՛, սխալ բէչէթա մը գըներ է, կ՚ուրեւայ քի զարարլը իլաճ մը չափէն աւելի տուներ է, ալլահալէմ մարդը առօք փառօք անդիի աշխարհ ճամբեր է, դատ բացեր են, բանտարկուի պիտի, սա ո՞ւր է, հոս տեղը ավօքաթ մը կուգար, մխսիւ Լեւոն է ինչ է, աս առտու ասլսախը եախայէս բռնեց էրկան բարակ խօսեցաւ։

ՌՕԶ.— Օ՛խ, ուրեմն աս զէվզէկէն ալ ազատեցանք... աս ի՞նչ բարի լուր էր մօրեղբայր։

ՏԱՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ — ՍԻՄԱԿ

ՔՏՈՒԻՍ. (Մտնելով).— Պարոն, Գառնիկ, տիար Ագրիպասը չեմ ուզ մը եկեր ձեզ տեսնել կ՚ուզէ կոր....

ՍԻՄԱԿ.— Թող ներս գայ... (Սիմակ դուրս կ՚ելլէ, մեհամարին ճաշակովչը փրթաւ նայինք ի՞նչ է։

բոլորովին— Ես կ՚երթամ (դուրս կ՚ելլէ)։

մեծ դժբա

ՏԱՍԻԼ Գ.

նուիրեւնն

ԳԱՌՆԻԿ ԱՂԱ—ԱԳՐԻՊԱՍ

օր վէճ, ամէ

իրար վիրաւորեւնն սնոտուկ մը ներս կը բերեն)

դժոխք, և կ՚ուր է Ագրիպաս աղա...

չէ, չպիտի մտնա բերողներուն).— Հոս դրէք սանկ... ներ

թիւն մը փոխ

հիմնուած իրարու Գառնիկ աղա... Արթին աղան

լծորդութիւն մը

փոխանակ լուծելու, ի՞նչ պիտի ըսէիր։

միայն ըստ իս երջանկութեան եմ իրեն, սա անտուկը ձեզի

մագլուխը... նիւթական տեն...

հիմակուան աղջիկներուն որ...

չունիմ, կ՚ուզեմ որ իմ ա ջենէտաններ, գործի թուղթեր,

հետ խանութի մ՚ալ ունենայ,

ըլլայ, բայց նաեւ գործի մարդ կ՚երթամ կոր, կէօջ

նմանելու բարեկիրթ ըլլայ, առտս առնեմ գոր պիտի

վերջապէս չի նմանի սա տօքթէօ ըսի քի քեզի ղրկեմ,

ներուն... ա՜հ Տիգրանս... ահաւ ունինք բան։

առաքանող միակ ամուսինը... գո(մեկուսի) ասոր տակը

լացի, միեւնոյն տեղն մեծ գինք էլպէթէ օրթան

պգացումներով, բարձր գաղափարն

կ'ելլայ... Է՛ գործերը նա՞սըլ են Ագրիպաս աղա... իմացայ քի օրթալըխը քէսաատ է եղեր...

ԱԳՐ.— Շատ քէսաատ է Գառնիկ աղա, շատ քէսաատ... ինչ է նէ ուրիշ առեն կը խօսինք, հիմա աճէլէ գործ մը ունիմ, աֆ կ'ընես... մնաս բարով...

ԳԱՌ.— Գնա՛ գնա՛, գործիդ նայէ... երթաս բարով: (Ագրիպաս կ'ելլէ) Մարդուն հիչէթին բէք չհաւնեցայ, մութլախ թօփը նետած է կամ պիտի նետէ... ասոնք ալ մաղազային թուղթերը ըլլալու են (սնուկին fով կ'երթայ), ծօ բալլինքն ալ վրան մուցկր է, մարդը բիւսքիւթիւն չաշըրմիշ է ըրեր... բանանք նայինք... ծօ՛... բոլորը տետրակներ, թուղթեր... հասկցանք, խանութէն փախցուցեր է... (կը գոցէ) Սրթին աղան դար տէ խապար ասայինք:

ՏԵՍԻԼ Ե.

ԳԱՌՆԻԿ—ՍԻՍԱԿ—ՇԱԻԱՐՇ

ՍԻՍ. (Ներս մտնելով). — Տօքթէօր Շաւարշ: (Դուրս կ'ելլէ):

ԳԱՌ.— Ծօ՛ աս տահա կը պտտի կոր, հաքիսը չէ՞ մահր:

ՇԱՒ. Ուժգնութեամբ ներս կը մտնէ եւ Գառնիկ աղան չտեսնելով կ'երթայ թիկնաթոռին վրայ կ'իյնայ).— Ա՛հ, այս անգամ հապը կ'լլնցի...

ԳԱՌ.— Ի՞նչ է ան տօքթէօր, բահաթը՞ղ էք, ի՞նչ ունիք... քիչ մը թէլաշը կ'երեւաք կոր:

ՇԱՒ. (Մեկուսի).— վա՛յ, առանձին չեմ եղեր... բաբեր, ի՞նչպէս էք, աղէ՞կ էք, որպիսութիւննիդ ի՞նչպէս է... առողջական վիճակնիդ լա՞ւ է, տիկինը ի՞նչպէս է, օրիորդը ի՞նչպէս է, Սրթին աղան...

ԳԱՌ.— Ամէնքս ալ ողջ առողջ ենք, փառք Աստուծոյ, բայց դուք հիւանդ կ'երեւաք կոր... ի՞նչ հապ է որ կ'լլնի էք:

ՇԱՒ. (Շփոթած).— Հա, բան... բան չէ... հապ չէ... այսինքն... այո՛ հապ, գլուխս կը ցաւէր կոր տէ անթիբիւրին առի, ես ալ թէեւ ուրիշներուն միշտ հապ տուած եմ, բայց ես չէի կ'լլած երբեք, մանաւանդ ասանկ հապ մը...

ԳԱՌ.— Այո՛, այո՛, կ'երեւայ կոր:

ՇԱՒ.— Բայց ինչ որ է... խնդիրը այն չէ, արդեօք տիկինը կրնա՞մ վայրկեան մը տեսնալ, շատ կարեւոր է, անհրաժեշտ է...

ԳԱՒ.— Շատ աղէկ, երթամ իմաց տամ... (Դուրս կ'ելլի):

ՇԱՒ. (Առանձնաց).— Այո՛, կլլեցինք հապը, ո՛ւր տեղէն ալ այդ փորձանքը գլուխս եկաւ, բաւական աշխատեցայ որ յանցանքը դեղագործին աշկերտին գլուխը փաթթեմ, բայց... չեղաւ և վերջապէս ինք դատապարտեցին... այո՛ ինք, տօքթէօր Շաւարշ, որ լա ֆաքիւլթէ որ Բարի, էքս էնթէրն որ լօբիթալ որ լա շարիթէ... այսօրուան օրս վեց ամիս բանտարկութեան դատապարտուած եմ... ձերբակալման հրամանագիրը նշած է արդէն, ոստիկաններն ետեւէս ինկած են, պատուհանէս տեսայ և պարտէզին դուռնէն հազիւ կրցայ կծիկը դնել... կառք մը առի և շիտակ հոս եկայ, հիմակ նայինք կրնա՞նք հոս քանի մը ժամ խօսակցութեան բռնուիլ Տիկին Եւփիմէին հետ. մինչեւ որ ոստիկանները հետքս կորսնցնեն և վաղը պէտք է որ Մէսաժըռիով անպատճառ Եւրոպա մեկնիմ, չէ նէ բանս բուրդ է...

ՏԵՍԻԼ Զ.

ՇԱՒԱՐՇ — ԵՒՓԻՄԷ

ԵՒՓ.— Օ՛ տօքթէօր դո՞ւք էք... այն աղէտալի գիշերէն իվեր զիրար չտեսանք, արդեօք ո՞րքան վշտացած էք մեզի դէմ, ներողութիւն կը խնդրեմ ամուսնոյս կոչտ վարմունքին համար:

ՇԱՒ.— Չ'արժեր տիկին, ես այդ դէպքին բնաւ կարեւորութիւն չտուի, մոռցած եմ արդէն:

ԵՒՓ.— Որքան ազնիւ էք, ձեզի այնպէս կը վայլէ ըսել:

ՇԱՒ.—Հաւատացէք տիկին ես այդ բանը բժիշկի աչքով դիտեցի, ես ձեր ամուսնոյն ըրածին մէջ պարզապէս իր հիւանդութեան՝ այսինքն աբանտխիթի մէջ գրգռութեան նշանը միայն տեսայ և ոչ այլ ինչ... մենք բժիշկներս վարժուած ենք այս տեսակ բաներու, իմ ցաւս այն է միայն որ ձեր սիրելի ամուսնոյն հիւանդութիւնը լաւ մը չբուժած կը մեկնիմ:

ԵՒՓ.— Կը մեկնի՛ք... դէպի ո՞ւր, Տէ՛ր Աստուած:

ՇԱՒ.— Եւրոպա՛... Վիեննա բժշկական համաժողով մը պիտի գումարուի մօտերս, ինծի ալ հրաւէր եկաւ Վիրխովի կողմէ, կ'երթամ կոր... Ես հրաժեշտ ողջոյններս ձեզի մատուցանել:

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ — ՍԻՄԱԿ

ՍԻՄ. (Ծոյլ ելած).— *Տիկին, ուօքթէօր, ահռելի բան մը... Փաստաբան մը, ոստիկաններ, մըխթար մը, չաւուշներ, դրան մարդիր վերջապէս, վարն են... եկան...*

ՇԱԻ. (Մեկուսի).— *Վա՛յ լինծի համար է, օձիքը ձեռք տուինք։*

ԵՒՓ. (Սարսափած).— *Ոստիկաննե՞ր մեր տունը։*

ՇԱԻ.— *Այո տիկին, դող մ'ելլաք... գիտեմ խնդիրը. ոստիկանութեան նախարարը քօլէրայէ բռնուած է... երեք օրէ ի վեր լինծի լուր կը ղրկէ կոր, ես ալ կը վախնամ չեմ երթար կոր... մանուկ և կնոջ խնդիր է և չեմ ուզեր Եւրոպա երթալէս առաջ մեռնիլ. կ'երեւայ թէ ճարահատած ոստիկան ղրկեր է ետեւէս ղիս բռնի տանելու համար, դուք հոգ մի քնէք, միայն լինծի պահուըտելու տեղ մը քանի մը վայրկեան միայն...* (Չորս կողմը կը նայի սնտուկը կը տեսնէ) *հա՛ այս սնտուկը գործիս կուգայ...* (կը բացայ) *ներողութիւն կը խնդրեմ տիկին, ցտեսութիւն* (կը մտնայ մէջը ու կը գոցէ)։

ԵՒՓ.— *Տէր Աստուած ինչե՛ր կ'ըլլանք կոր... բայց ուօքթէօր...*

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆՔ — ԳԱՌՆԻԿ

ԳԱՌ. (Մտնելով) — *Էֆէնտիք, հայտէ չուտով սենեակդ քաշուէ, տուներնիս կոխուեցաւ, խուզարկութիւն պիտի ըլլայ, ոստիկանները վեր կ'ելլան կոր...*

ԵՒՓ.— *Ահ, ինչ կ'անցնի կը դառնայ կոր արդեօք, Տէր Աստուած, միւսիւ Բասքալն ալ հոս չէ...*

ԳԱՌ. (Հրելով).— *Գնա՛, գնա՛, կուգան կոր։* (Եւփիմէ կ'երթայ)։

ՏԵՍԻԼ Թ.

ԼԵՒՈՆ—ՄՈՒԽԹԱՐ—ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ—ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԵԱՅ—ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆ—ՍԻՄԱԿ—ԳԱՌՆԻԿ

ԼԵՒ. (Ձեռքը թուղթ մը՝ Գառնիկին).— *Յանուն օրինաց և արդարութեան կը հարցնեմ ձեզ թէ ճերմակեղէնի վա-*

ճառական Սամաթիացի Ագրիպաս Սաղաթէլեանի վերաբերող սնտուկ մը հոս բերուա՞ծ է թէ ոչ։

ԳԱՌ.— Սա ըլլալու է... քիչ մը առաջ բերաւ ձգեց... բայց ի՞նչ կայ որ...

ԼԵԻ.— Ի՞նչ պիտի ըլլայ, Ագրիպաս աղան անանկացած է և իր տետրակները փախցուցած է... Առեւտրական դատարանի վճռին համեմատ, պաշտօն ունինք սոյն տետրակները գտնել ու կնիքի տակ առնել։

ՏԵՍԻԼ Ժ.

ՆՈՅՆՔ — ԱՐԹԻՆ

ԱՐԹ. (Մտնելով).— Ի՞նչ է, ի՞նչ կ՚ըլլանք կոր... (փաստաբան եւ պաշտօնեայք սնտուկը կը կնքեն... ոստիկանը ընդհանուրին).

ՈՍՏ.— Ո՞վ է այստեղի տանտէրը...

ԱՐԹ.— Ես եմ, ի՞նչ կայ քի...

ՈՍՏ.— Իմացանք որ տօքթէօր Շաւարշ անունով վեց ամսուան բանտարկուած հայ բժիշկ մը ձեր տունը եկեր ապաստաներ է, եկանք զայն փնտռել.

ԱՐԹ.— Տօքթօր Շաւա՞րշ մի... էս անիկա չատոնց վռնտեցի աս տեղէն։

ՈՍՏ.— Կը տէ՛ք էֆէնտի, մեր լրտեսները տեսած են ձեր տունը մտնելը։ (Ոստիկաններուն) չո՛ւտ, տանը ամէն կողմը ծակը ծուկը խուզարկեցէք, մառանէն սկսեալ մինչեւ վերնայարկը փնտռեցէք փախստականը և եթէ հոս գտնուի ձեզ ալ միասին ձերբակալել պիտի տամ...

ԱՐԹ.— Ուզածնուդ չափ փնտռեցէք, աղեկ կիմէմ քի հոս չէ։

ԳԱՌ. (Կամաց մը Արթինին).— Սուս եղիր խօսքը մէջերնիս, քիչ մը առաջ հոս էր, Եւփիմէին հետ կը խօրաթէր կոր...

ԼԵԻ.— Դուք ալ ոստիկան էֆէնտի, ըսել է տօքթէօր Շաւարշը ձերբակալելու պաշտօ՞նը ունիք։

ՈՍՏ.— Այո՛, վճիռը երէկ եկաւ։

ԼԵԻ.— Գիտեմ, արդէն դատ բացողը ես էի...

ԱՐԹ.— Ձանըմ ավօգաթ էֆէնտի, ի՞նչ խնդիր է աս... տօքթօր Շաւարշը ի՞նչ ըրեր է քի...

ԼԵԻ.— Ի՞նչ պիտի ընէ, սխալ դեղ մը տուաւ, մարդ մը մեռցուց, դատ բացի, վեց ամիս ծակը նետել տուի։

ԱՐԹ.— Եա՛... զաթէն ես կիտէի կոր քի այդ մարդը սաղլամ այաք խապլի մը չէր. մէյմալ մեր կնիկը մեզի փեսայ պիտի ընէ այդ էշէնք հերիֆը։

ՈՍՏ.— Ուրեմն պարոն փաստաբան անտուկը տանինք այնպէս չէ՞...

ԱՐԹ.— Ո՞ւր կը տանիք կոր Ադրիպաս աղային սընտուկը... ի՞նչ է սա, մէօհլուլէմիշ էք ըրեր։

ԼԵԻ.— Ադրիպաս աղան թօփ նետեց, երեկ չէ առջի օրը իլամ եալա չիմացա՞ր, թուղթերը հոս փախցուցեր է, եկանք կը տանինք կոր...

ԱՐԹ.— Վա՛յ, Ադրիպաս աղան թո՞փ նետեց... ծօ չիմարի չըլտըրըրըմ... տահա աս առտու տեսայ լինձի պան մը չըսաւ։

ՈՍՏ. (Ոստիկանները կը մտնեն),— Ի՞նչ լուր նայինք...

ՄԷԿԸ.— Ամէն կողմ փնտռեցինք մեկը չգտանք...

ՈՍՏ.— Ուրեմն մեր պարտքը կատարած ըլլալու համար անգամ մըն ալ պէտք է սա՛ նտուկը նայինք։

ԼԵԻ.— Ո՛չ, պարոն ոստիկան, այս անտուկը կնքուած է յանուն օրինաց և ըստ բացորոշ տրամադրութեան առևտրական օրինագրքին 533րդ յօդուածին երկրորդ հատուածին և ըստ առևտրական դատարանի վճռոյն, ոչ ոք և ոչինչ կրնան խզել այս կնիքը...

ՈՍՏ.— Պարոն մեր հրամանագիրն ալ բացորոշ է, ուր որ ալ ըլլայ փնտռել և գտնել ուօքթէօռ Շաւարշը և բանտ տանիլ... Ուրեմն թոյլ տուէք մեր պարտքը կատարել և մի ընդդիմանաք։

ԼԵԻ.— Անկարելի է ոստիկան էֆէնտի (թուղթը ցուցնելով) հաճեցէք կարդալ և պիտի համոզուիք։

ՈՍՏ.— Դուք այս թուղթը կարդացէք։

ԱՐԹ.— Ախպար ի՞նչ կուլու կ՛ընէք կոր պէ... առէք տարէք սա պէլալը անտուկը, դուրսը բայ ըրէք, իմ տունս առլիյէ՞ է չէնէ մի զապթիյէ (ոստիկանները կը մօտենան անտուկին, փաստաբանը կ՛արգիլէ)։

ՈՍՏ.— Պէտք է բանալ, օրէնքը... արդարութիւնը, վճիռը...

ԼԵԻ.— Կեցէ՛ք, այս խնդիրը լուծելուն մէկ օրինական միջոցը կայ... ըստ որում այս պարագան նախատեսուած չէ օրինագրքին մէջ. պէտք է որ անյապաղ խնդիրը ներկայացնենք առիպողական գործոց դատաւորին, առնենք անտուկը դատարան տանինք։

ՈՍՏ.— Լաւ, կ'ընդունիմ առիկա, (ոսիկաններուն) շուտ, սա անտուկը վերցուցէք նայիմ։

(Սնտուկը վերցուցած ատենին տակի տախտակը կ'իյնայ եւ Շաւարշ կ'երեւայ թուղթերու եւ տետրակներու մէջ)։

ԱՄԷՆՔԸ.— Ա՛հ...

ՇԱՒ.— Երթանք քանի որ պէտք է, վեց ամիս ձեզի հիւր եմ, եթէ բանտին մէջ հիւանդ ունիք լինձի համար գործ չի պակսիր այն առեն. բժիշկը ամէն տեղ իւր մարդասիրական պարտականութիւնը պէտք է կատարէ, ըլլայ բանտին մէջ, ըլլայ պալատներուն մէջ. առայժմ մնաք բարով, Տևարք, բանտէն ելլելէս վերջը նորէն կը տեսնուինք... Արթին աղա ինքզինքնիդ լաւ նայեցէք, տուած դեղագիրներս գործածեցէք եթէ կ'ուզէք որ աբանտախտանիդ բուժուի...

ԱՐԹ.— Երթաս բարո՛վ... երթաս բարո՛վ...

ԼԵԻ.— Ասկէ յաջող լուծում կարելի չէր երեւակայել, խնդիրը տակէն լուծուեցաւ, կնիքը անհետ ծնաց, օրէնքը յարգուեցաւ, վճիռը տեղը գնաց, ոստիկանութիւնն ալ գոհ ծնաց, արդարութիւնն ալ... ուրեմն ժողվենք սա տետրակները և անտուկն ալ առնելով երթանք, ա՛լ գործ չունինք հոս (կ'երթան)։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԱՐԹԻՆ—ԳԱՌՆԻԿ—ԵԻՓԻՄԷ

ԵԻՓ. (Մտնելով).— Տեսա՞ր մի քու Սպրիպաս աղա՛ն, պատուաւոր վաճառական, քուէտիթոյի տէր, բիացային վրայ անուն հանած, աստուածաճախ, 4—5000 ոսկի չափած, սանկ աղէկ, նանկ խըչյախ փեսացուդ... տեսա՞ր հիմա, առ տէ նստէ՛...

ԱՐԹ.— Է դուն ալ տեսա՞ր մի քու մինչեւ երկինք հանած տօքթօռդ, փաշաներու, պէյերու, էֆէնտիներու նայող, Բարիզէն նոր եկած, Պոլսոյ մէջ մեկ հատիկ բժիշկ, ուսումնական, զարգացած, քաղաքավար, ասոր անոր փոքրէն քար հանող, կռնակէն շէքեր հանող, հիմա կրնայ նէ ինքզինքը մահպուսէն հանէ։

ԳԱՌ.— Ինծի նայեցէք, պարապ տեղը իրարու սիրտ մի կոտրէք, եղածը եղաւ, հէմ ալ բէք աղէկ եղաւ, ձեզի ասանկ բան մը պէտք էր քի, կուրցած աչուընիդ քիչ մը բանայիք, նէ ան քու տօքթօռ Շաւարշդ մարդ էր, նէ ալ քու Սպրիպաս աղադ։

ԱՐԹ.— Ատոնք աղէկ ամմա, հիմա ի՞նչ ապուր ուտելու է, օրթատեղը վնասցու չմնաց։

ԳԱՌ.— Ասատուած վարդուկին խամէթը պաթէն տուած է, հոգ մ՚ընէք։

ԱՐԹ.— Ա՛ա ի՞նչ խօսք է...

ԳԱՌ.— Շատ չը քըշիր կը հասկնաս... պէլքի այսօր յայտնի կ՚ըլլայ։

ՍԻՍ. (Ձեռքը բառք մը ցերս կը մտցնէ).— Հիւր մը եկած ձեզ տեսնել կ՚ուզէ։

ԳԱՌ. (Կարդալով).— Նիկողոս Պէյազեան...

ԱՐԹ.— Ծօ՛, Նիկողոս էֆէնտի՛ն... թիւճճարն է, ներս մտցուր, ինչո՞ւ եկեր է աճապար, առջի անգամ նէ։

ԵՒՓ.— Նիկողոս էֆէնտին ո՞վ է...

ԱՐԹ.— Ի՞նչ կ՚ըսես կոր քա, 20—30,000 ոսկիի տէր է, երեք հատ մանիֆաթուռայի մաղազա ունի, Սթանպօլ, Պէյօղլու, Գալաթիա...

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՆՈՅՆՔ—ՆԻԿՈՂՈՍ ՍՂԱ

ԱՐԹ.— Օ՛, հրամմեցէք, Նիկողոս էֆէնտի, աս ի՞նչ պատիւ է կ՚ընէք կոր մեզի, մենք լայը՞ղ էինք ձեր վիզլիթային... էֆէնդիկ, քեզի բուէզանթէ ընեմ... Պէղազեան Նիկողոս էֆէնտի, մանիֆաթուրայի թիւճճար, էլպէթ լսած ես...

ԵՒՓ.— Շատ ուրախ եմ էֆէնտին ճանչնալուս, թէեւ լսած եմ, բայց տեսնելու պատիւը չէի ունեցած...

ՆԻԿ.— Շնորհակալ եմ տիկին, պատիւը փոխադարձ է։

ԵՒՓ.— Սանկ քանաքէյին վրայ հրամմեցէք, Նիկողոս էֆէնտի։

ԱՐԹ.— Հոս տահա բահաթ կ՚ընէ էֆէնտին...

ՆԻԿ.— Ինդրեմ անհանգիստ մ՚ըլլաք, ես աթոռին վրայ աւելի հանգիստ կ՚ընեմ...

ԱՐԹ.— Ի՞նչ կ՚ըսէք Նիկողոս էֆ. դուք աթոռին վրայ նստիք նէ մենք ո՞ւր նստինք... չըլլալիք բան է նէ...

ԵՒՓ.— Նիկողոս էֆ. սանկ քանաքէյին վրայ հրամմեցէք, տեսէք աս տեղէն ծովը կ՚երեւայ։

ԱՐԹ.— Հոս փօթէօյլի վրայ նստեցէք էֆէնտիս, աս թառաֆէն պիւթիւն Զամլըճային լեռները կ՚երեւայ... (Նիկ. կը նստի)։ (Երկուքը իրենց հաշտեցով) Զըլլար ըսի էֆէնտիս, պահիր կը վայլէ...

ՆԻԿ.— Էյ քէք աղէկ ճանըմ, քանի որ այդչափ կը պնդէք կոր (Ֆօրճօյլին վրայ կը նստի)։

ԱՐԹ.— Հա չէօյլէ...

ԵՒՓ.— Վայ Նիկողոս էֆ. ասանկ հէ՞... ղիս կոտրեցիք, իմ գիտնալս ալֆրանկային մէջ կնկանն խօսքը մտիկ կ՚ընէ՞ւ, ոչ թէ էրիկ մարդունը...

ՆԻԿ.— Իրաւունք ունիք տիկին, ներողութիւն կը խնդրեմ։ (Տեղը փոխել կ՚ուզէ)։

ԱՐԹ.— Չէ՛, նայէ աւո չընէ՞ր, քանի քի նստեցար ծնալու ես, ետքը խաթրըս կը կոտրի հա...

ՆԻԿ.— Է՛հ, անանկ է նէ ի՞նչ ընենք տիկին, համակերպելու է, ես ձեր խաթրն ալ չեմ կոտրեր, քիչ մըն ալ քանաքէյին վրայ կը նստիմ։

ԱՐԹ.— Հա, նայէ աւոր ըսելիք չունիմ...

ՆԻԿ.— Հիմա Արթին աղա, սա իմ այցելութեանս պատճառը երկու խօսքով բացատրեմ. ես քովս գրագիր մը ունիմ. Տիգրան Կիրկիրեան...

ԱՐԹ.— Հա՛, մխսիւ Տիգրանը... կը ճանչնամ նէ, քէք քիպար երիտասարդ մըն է...

ՆԻԿ.— Հիմա անիկա իմ ընկերս եղած է...

ԱՐԹ.— Ի՞նչ կ՚ըսես Նիկողոս էֆ... աֆէրիմ օղլում, ի՞նչ ալ շուտով առաջ գնաց։

ՆԻԿ.— Այո՛, չատ շուտով, ան ալ շնորհիւ իր վարք ու բարքին և հաւատարմութեանը, զաւկիս պէս կը սիրեմ, մէկ հատիկ չգտնուած տղայ է... Ինչ է նէ Արթին աղա, հիմա քանի որ դուն ալ հաւնած ես, խնդիրը կը դիւրինանայ, ես հիմակ Տիգրանին կողմէ եկած եմ, ձեր աղջիկը Օր. Վարդուհին ամուսնութեան ուղելու. նայեցէք, մտածեցէք, հարցուցէք, փնտռեցէք և ինծի պատասխան մը տուէք։

ԱՐԹ.— Ամէն Նիկողոս էֆ. ի՞նչ կ՚ըսես կոր, հարցուցնելու փնտռելու ի՞նչ պէտք կայ, պատասխանս հա է, հա օղլու հա է... քանիքի դուք մէջն էք, քանիքի ծովի պէս մխիթէպէր թիւճճարի մը օրթախան է եղեր...

ԵՒՓ.— Մի՛ աճապարեր մխսիւ Բասքալ... (խնդալով), կարծեմ թէ Նիկողոս էֆ. սիրայն հօրը հաւանութիւնը չի բաւեր... այնպէս չէ՞... այդ ձեր մխսիւ Տիգրանը դրծունայ, երիտասարդ, ձեր ընկերը, ասոնք ամէնքն ալ աղէկ ըսելիք չունիմ, բայց ուսումնակա՞ն է, զարգացա՞ծ է, լեզու գիտէ՞...

ԱՐԹ. (Եւփիմէին).— Ի՞նչ խալթ կը խառնես կոր պէ կնիկ...

ՆԻԿ.— Այո՛, տիկին, (2 թուղթ կը հանէ) հաճեցէք այս թուղթերը կարդալ, Տիգրանին տիբլօմաններն են (մեկն ալ Արթինին տալով) աս ալ ձեզի համար։

ԱՐԹ.— Ես անանկ բաներու պէտք չունիմ, ես տիբլօմա չեմ փնտռեր։

ՆԻԿ.— Արթին աղա, աս տիբլօմա չէ, աս ալ մեր Տիգրանին հետ օրթախութեան քօնթրաթն է։

ԱՐԹ.— Ի՞նչ պէտք կայ էֆէնտիս, ձեր լսօսքը հազար թուղթ կ՛արժէ, (մեկուսի) տեսա՞ր մի սա թուղթը հազար տիբլօմայի տեղ է։

ԵՒՓ. (Մեկուսի)·— Սա թուղթերը հազար հատ քօնթուաթ կ՛արժեն։

ՆԻԿ.— Ուրեմն տասնկ (կ՛ելլէ) ես կ՛երթամ Արթին աղա դուք քօնթրաթը կարդացէք և դուք ալ տիկին վկայականները և կարելի եղածին չափ շուտ ինծի պատասխան տուէ՛ք...

ԱՐԹ.— Իմ ճօղապս հա է...

ԵՒՓ.— Իմ պատասխանս ալ այո՛...

ՆԻԿ.— Մնաք բարով...

ԱՐԹ.–ԵՒՓ.— Երթաք բարով, նորէն հրամմեցէք, (Նիկ. կ՛երթայ):

ՏԵՍԻԼ ԺԳ.

ԱՐԹԻՆ—ԵՒՓԻՄԷ—ԳԱՌՆԻԿ

ԱՐԹ.— Իշէք արատըղըմ կիւվէյլ...

ԵՒՓ.— Ահա իմ իտէալ փեսաս...

ԱՐԹ.— Եաղըճութենէ եղած...

ԵՒՓ.— Ռօպէրթ Գօլէճէն վկայուած...

ԱՐԹ.— Նիկողոս էֆէնտիին հետ օրթախ եղած...

ԵՒՓ.— Մարսիլիոյ Առեւտրական վարժարանը մտած...

ԱՐԹ. (Ակնոց դնելով).— Հարուրին 40 չահ...

ԵՒՓ.— Զորս լեզու, հայերէն, տաճկերէն, դաղլիերէն, անգղիերէն։

ԱՐԹ.— Ասկէ դատ եաղըճութեան ալ ամսական։

ԵՒՓ.— Հապա ուխիւննները... քնադիտուխիւն, տարբրալուծուխիւն, հանքաբանուխիւն, պատմուխիւն, հոգեբանուխիւն, փիլիսոփայուխիւն...

ԱՐԹ. (Այս միջոցին Գառնիկ կը մտնէ, Արթին Եւփիմէին).— Տեսա՞ր մի մարդը։

ԵՒՓ.— Տեսա՞ր մի չնորհքով զարգացնալ կրիտասարդը։

ԱՐԹ.— Ի՞նչ փարա կ'ընէ զարգացումը, աս պէտք է աս, քանի՞ կ'առնեմ քու աս տիբլօմադ։

ԵՒՓ.— Ի՞նչ արժէք ունի քու այդ քօնթռաթդ...

ԱՐԹ.— Ինծի նայէ նորէն չսկսինք (բուղբը ցուցնելով) ես աղջիկս աստր պիտի տամ...

ԵՒՓ.— Չէ, ես ալ աստր պիտի տամ...

ԱՐԹ.— Չէ, իմ խօսքս պիտի ըլլայ...

ԵՒՓ.— Չէ, իմ խօսքս...

ԳԱՌ. (Առաջ գալով).— Ի՞նչ կռիւ կ'ընէք կոր պէ, ուրախուխիւննուդ խնդրնիդ փախցուցի՞ք, աս թուղթին տէրն ալ Տիգրանն է, աս թուղթին տէրն ալ...

ԱՐԹ.— Ծօ հա իրաւ, էյ անխըտաար կռիւ ընելու աչքդմիշ եղած ննք քի, շաշըրմիշ ըրինք։

ԳԱՌ.— Ի՞նչ է նէ, ալ հիմա երկուքնիդ ալ մուրատնուդ հասաք։ դուն քուկին ըսած մարդդ գտար, ուսումնական, զարգացնալ, դուն ալ քու ուզածդ, թիւճճար, Ռօզն ալ իր ուզածը, հէմ ուսումնական հէմ գործի մարդ, որով մէկ փեսայի տեղ երեք փեսայ կ'ունենաք կոր, ձեր երեքին ալ յարմար... Ինծի նայեցէք, ալ ասկէ վերջը անանկ ալաֆրանկայի, ալաթուռքայի կռիւներով կեանքերնիդ հառամ մ'ընէք... Սրթին աղա դուն քիչ մը բարակցիր, էֆթիկ դուն ալ քիչ մը հասցիր տէ, իրարու հետ ալ սիրով ապրեցէք, հայտէ պագտուեցէք նայիմ, ա՛լ խռպահաթներնիդ աֆ ըրէք իրարու։

ԱՐԹ.— Եկուր Եւփիմէ...

ԵՒՓ.— Սրթին աղաս...

ԳԱՌ.— Հա հէօ՛յլէ... էֆթիկը Եւփիմէ, Բաբքալն ալ Սրթին, հաշտուխի՛ւն... Ֆրանքօ-Թրքական պատերազմը վերջացաւ։

Վ Ե Ր Ջ

ՄԵՐ ՔՈՎ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ

	Ղրշ.
Աստուածներք ծարաւի՛ են	25
Արաբսիա	200
Ամիրային Աղջիկը	500
Անիւն ծախուեցաւ	200
Ապտիւլ Համիտ եւ Ափրօղիս	400
Աննա Քարենինա	750
Ալբուն Պէյին Հարսնիքը	160
Արտպէլլա	200
Ազնուականներու Բոյնը	200
Ամուսնութիւնի Բարիզի	200
Բօլ եւ Վերժինի	150
Երեք Հրացանակիրներ	800
Իմստնի Հերոսամարտը	400
Ընտանեզուրկը	500
Ընկերը	200
Կարմիր Գազանը	200
Կնոջ Հոգիներ	250
Կրանց Նաւապետ	500
Կինը	250
Հարիւրեմեակ Դիւցերներ	300
Հինգ Շաբաթ Օդապարիկով	300
Հարիւրապետ Քօքիւօ	200
Հացագործ Կինը	1000
Ձեռ Էյր	500
Մօնթէ Քրիսթօ	1500
Միհինի Սիրարկածը (Ե. Օտեան)	50
Մտերիմ Խորհուրդներ	300
Մանչ Աղջիկը	250
Շամիրամ Թագուհին	250
Պիրիւտաճ	400
Պենհուր	700
Պենամոլները	700
Սաթենիկ Տրդատ	200
Սիմօնէ Մարի	800
Վրէժ	1500
Սօնիա	200
Թահրա Պէյ (2 հատոր)	400
Թօսուն Միրիկ	200
Ինչպէս սպաննեցի Ռասբուրինը	150

ԳԻՆ 250 ՂՐՇ.